

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

### Իսրայել եւ Թուրքիա՝ Բնական Դաշնակիցներ

Ամէն անգամ երբ Իսրայել-Թուրքիա յարաբերութիւնները երեւոյթապէս վատթարացնան նշաններ ցոյց կու տան եւ տագնապի տպաւորութիւն կը ստեղծեն, Իսրայելի մէջ ծայրեր կը բարձրանան՝ պահանջելով Հայկական Յեղասպանութեան ճանաչումը:

Ամերիկայի նախագահ Տոնալտ Թրամփի վերջին որոշումը՝ Երուսաղէմը որպէս Իսրայելի մայրաքաղաք ճանչնալու եւ Սիւսքեալ Նահանգներու դեսպանատունը Թէլ Աւիվէն Երուսաղէմ փոխադրելու կապակցութեամբ, միջազգային բողոքի ալիք յառաջացուց: Ամենէն աւելի աղմկողներէն մէկը հանդիսացաւ Թուրքիոյ նախագահ Էրտողանը, որ սպառնաց խզել Իսրայելի հետ յարաբերութիւնները ինչպէս որ խոստացած էր ընել ասկէ առաջ բազմաթիւ անգամներ՝ առանց գործնականացնելու զայն:

Վերջին օրերուն Իսրայելի մէջ դարձեալ կոչեր եղան՝ Հայկական ցեղասպանութեան ճանաչման հարցը խորհրդարանի օրակարգին վրայ դնելու պահանջով:

Հակադէպով, շատ բացայայտ կեցուածք մը ունեցաւ Իսրայելի պաշտպանութեան նախարար Ավիկտոր Լիպերման եւ զգուշացուց նման կոչեր ընողներուն: Ան յստակ դարձուց որ, Իսրայել-Թուրքիա յարաբերութիւնները այնքան խորարմատներ ունին, որ չեն կրնար որեւէ պարագայի տակ վտանգուիլ: Որպէս ժայրայեղ աջակողմեան ճանչցուած Լիպերման հերթական անգամ կասկածի տակ դնելով Ցեղասպանութեան փաստը ըսաւ, թէ անթոյլատրելի է Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալ՝ ի հեճուկս Թուրքիայի: «Ես չեմ կարծեր, որ այդ հարցը, որը հիմնականին մէջ պատմական, վիճելի եւ տեսական է, ընդունելի է շահարկել»: Ան նաեւ չմոռցաւ յիշեցնելու, թէ նման որոշումի պարագային կը վտանգուին նաեւ յարաբերութիւնները Ատրայէ-ճանի հետ, «իսկ այդ յարաբերութիւնները Իսրայելի համար գերակայ են», շեշտեց նախարարը:

Այսպիսով, Լիպերման յստակ դարձուց որ, պէտք չէ յոյս փայփայել Իսրայելի կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման գծով, որքան որ այլ ծանրանան Թուրքիոյ հետ անոր յարաբերութիւնները:

Իսրայելացի բարձրաստիճան պաշտօնեայի այս անկեղծ խոստովանութենէն ետք, Հայաստանն ու հայութիւնը իրենք եւս պէտք չէ յոյսեր կապեն Իսրայելի հետ յարաբերութիւնները սերտացնելու առումով: Իսրայել եւ Թուրքիա պատմականօրէն եղած են ու կը մնան բնական դաշնակիցներ:

«ՄԱՍԻՍ»

### Երեւան-Անգարա Բանավէճ՝ Հայ-Թրքական Հաշտեցման Արձանագրութիւններուն Շուրջ

Վերջին օրերուն հեռակայ բանավէճ տեղի կ'ունենայ Երեւանի եւ Անգարայի միջեւ, կապուած 2009 թուական ստորագրուած Հայ-թրքական հաշտեցման արձանագրութիւններուն հետ, որոնք մինչեւ օրս կը մնան թուղթի վրայ: Կողմերը զիրար կը մեղադրեն այդ փաստաթուղթի ձախողութեան մէջ:

Յունաստան կատարած իր այցելութեան ընթացքին, Հայաստանի արտաքին գործոց նախարար Էտտուր Նալպանտեան յայտարարեց որ, մինչ օրս այդ փաստաթուղթերը չեն վաւերացուած, քանի որ Թուրքիա առաջ քաշած է անհիմն նախապայմաններ, որոնք կը հակասեն Արձանագրութիւններու տառին եւ ոգիին: «Այս փաստաթղթերը չեն կարող ընդմիջտ պատանդ մնալ, եւ դա է պատճառը, որ Հայաստանի նախագահը Սեպտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլիայի ամբիոնից յայտարարեց, որ Հայաստանը արձանագրութիւններն առ ոչինչ կը յայտարարի, քանի որ չկայ որեւէ դրական

առաջընթաց դրանց իրականացման համար, եւ մենք 2018թ գարունը կը դիմաւորենք առանց այդ Արձանագրութիւնների», ըսած էր Նալպանտեան:

Հայ նախարարի այս յայտարարութեան ի պատասխան Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը հանդէս եկաւ պաշտօնական հաղորդագրութեամբ, մեղադրելով Երեւանը:

Մերժելով Նալպանտեանի պնդումները, թրքական կողմը յայտարարեց, որ անոնք չեն արտացոյցելու ճշմարտութիւնը եւ նպատակ ունին մոլորութեան մատնելու համաշխարհային հասարակական կարծիքը: Անգարա կը շեշտէ որ, Թուրքիան հետամուտ եղած է Հայաստանի հետ յարաբերութիւններու կարգաւորման մի քանի մակարդակով, այն պահէն երբ 1991-ին Հայաստան անկախ պետութիւն հռչակուեցաւ:

«Հակառակ Արձանագրու-

Շար.ը էջ 5

### Ս.Գ. Հնչակեան Ներկայացուցիչներու Հանդիպումները Մոսկուայ Մէջ



Հնչակեան Կուսակցութեան պատուիրակներու հանդիպումներէն մէկը Մոսկուայ մէջ


16-էն 18 Դեկտեմբերին, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան անդամներ Նարեկ Գալստեան (Հայաստան), Ալեքսան Գեօրգիւրեան (Լիբանան) եւ ՄԴՀԿ Հայաստանի քաղաքական դիւանի ներկայացուցիչ Արմէն Մկրտչեան, Ռուսաստանի Դաշնութեան մայրաքաղաք Մոսկուայի մէջ շարք մը հանդիպումներ ունեցած են տեղի հայ համայնքի աշխոյժ ներկայացուցիչներուն եւ համայնքային կազմակերպութիւններուն հետ: Հնչակեան կուսակցութեան պատուիրակութիւնը 17 Դեկտեմբերին, Մոսկուայի հայ համայնքի գրասենեակէն ներս հանդիպած է ԽՍՀՄ-ի

բազմաթիւ երկիրներու մէջ արտակարգ եւ լիազօր դեսպան Կեդրի Տէր-Ղազարեանի, ՀՀ Զինուած Ուժերու Գլխավոր շտաբի նախկին պետ, ՌԴ ցամաքային զորքերու վեթերաններու միութեան նախագահ, զօր. Նորատ Տէր-Գրիգորեանցի, պատմաբան Կարէն Միքայէլեանի եւ Ռուսաստանի Հայերու միութեան Մոսկուայի մասնաճիւղի ղեկավար Շահէն Պետրոսեանի հետ:

Հանդիպման ընթացքին Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչները նշած են, որ շահագրգռուած են աշխոյժ շփում-

Շար.ը էջ 5

### Շարլ Ազնաւուր Կը Քննադատէ Հայաստանի Իշխանութիւններու Գործելակերպը



Ֆրանսահայ երգիչ Շարլ Ազնաւուր

«Երբ մէկը երկու հակիթ կը գողնայ, կը բանտարկեն զինք, մինչդեռ այն մարդիկ, որոնք միլիոններ կը գողնան, անպատիժ կը մնան», ֆրանսական «Nouvelles d'Armenie» պարբերականին տուած հարցազրոյցի ժամանակ նշած է ֆրանսահայ երգիչ, երգահան Շարլ Ազնաւուրը, մատնանաշէլով, որ այս մէկը անընդունելի է:

«Պէտք է գիտակցինք, որ ունինք գեղեցիկ երկիր մը, որ պէտք է զարգացնել, այլապէս այն օր մը կրնայ անհետանալ այնպէս, ինչպէս անհետացած են որոշ հին քաղաքակրթութիւններ: Իսկ այս գործի պատասխանատուութիւնը Հայաստանի ղեկավարները կը կրեն», - ըսած է Ազնաւուրը:

Աշխարհահռչակ երգիչին խօսքով, ինք այս մասին խօսած է Հայաստանի ղեկավարներուն հետ. - «Ես անոնց չեմ խնայեր: Կ'ըսեմ այն, ինչ կը մտածեմ»:

Ազնաւուր նշած է, որ ինք իր գործունէութեամբ միշտ կը ջանայ Հայաստանի բարեկամները շտապեցնել. - «Ես կողմնակից մարդոց ներդրումներ կատարել Հայաստանի մէջ, նուիրուիլ Հայաստանին»:

Ազնաւուրի համաձայն, Հայաստանը այսօր շատ վատ ճամբու վրայ չէ, առաջ կ'երթայ, որոշ բաներ լաւ են, գլխավոր խոչընդոտը, ինչպէս կ'ըսէ ան, խորհրդային հասարակարգին ձգած դրոշմն է, որմէ ամբողջապէս ազատելու համար դեռ քիչ մը ճանապարհ պէտք է անցնիլ:

Հանրայայտ երգիչը անդրադարձած է նաեւ «Շարլ Ազնաւուր» հիմնադրամին, որ փոխարինած է 1988 թուականի աւերիչ երկրաշարժէն ետք ստեղծուած «Ազնաւուրը Հայաստանի համար» միութեան: Ան ըսած է, որ հիմնադրամը կը շարունակէ նախորդի մարդասիրական գործունէութիւնը՝ անօթեւան մարդոց օգնելու համար, բաց նաեւ մշակութային գործունէութիւն կը ծաւալելի:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ահաբեկչական Նոր Խմբավորում՝ Իրականի Ու Կասկածելիի Սահմանը

2018-ի Վերաբերեալ Կարէն Կարապետեանի Որոշումը

ԱՆԻ ՍԱՅԱԿԵԱՆ

Հայաստանում ահաբեկչական գործողությունների կասկածանքով հերթական խմբավորման այսպէս կոչուած պարագլխի բացառապատճառով իրարամերժ գնահատականների տեղիք է տուել: Ազգային անվտանգութեան ծառայութիւնը հաղորդագրութիւն տարածեց, ըստ որի «օպերատիւ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողութիւնների արդիւնքում» պարզել է. «Ազգութեամբ հայ, ԱՄՆ քաղաքացի Ռ.Ք.Ն 2017 թուականի Սեպտեմբերին «Ֆէյսբուք» սոցիալական ցանցում գրանցել է Martin Avagyan օգտատիրոջ կեղծ տուեալներով անհատական էջը, որի միջոցով հրապարակել է նիւթեր՝ «Մարտիկներ յանուն արդարութեան» անունամամբ խմբավորում ձեւաւորելու, խմբավորման գործունէութեան մարտավարութեան, դրա անդամների կարգապահութեան, անվտանգութեան եւ գաղտնապահութեան կանոնների մասին:

Նոյն ժամանակահատուածում նշուած անհատական էջի միջոցով տարածուել են նաեւ Հայաստանի Հանրապետութեան իրաւապահ եւ այլ պաշտօնատար անձանց նկատմամբ բռնութիւն գործադրելու, պաշտիւններ, հրկիզումներ իրականացնելու եւ այդ եղանակով համընդհանուր վախի մթնոլորտ ձեւաւորելու ուղղակի կոչեր»: ԱԱԾ-ն եզրակացրել է, որ Ռ.Ք.Ն «փորձել է ստեղծել յանցաւոր համագործակցութիւն՝ դրան մասնակից դարձնելով ինչպէս Հայաստանում, այնպէս էլ դրա սահմաններից դուրս բնակուող ազգութեամբ հայ քաղաքացիներին»:

ԱԱԾ-ն դիմել է ԱՄՆ իրաւասու կառույցներին՝ ներկայացնելով ձեռքբերուած ապացոյցները եւ համագործակցելու խնդրանքով: Հայաստանում «ձեռնարկվում են միջոցներ ՀՀ-ում գտնուող Ռ.Ք.Ն-ի յանցակիցներին պարզելու եւ յայտնաբերելու ուղղութեամբ»: Աւելի ուշ հետախուզողի ինքնութիւնը պարզ դարձաւ, ամերիկայաբնակ Ռոբերտ Քուրթեան, որը մասնագիտութեամբ բժիշկ է, իսկ ԱՄՆ-ում բիզնեսով է զբաղւում: Այս հաղորդագրութիւնից յետոյ առաջին ռեակցիան, որ տուեց հայաստանեան ակտիւ հանրութիւնը, ԱԱԾ-ի դէմ էր: Ծատերի կարծիքով ԱԱԾ-ն հերթական գործն էր կարուծել ինչ-որ անյայտ օգտատիրոջ դէմ, որպէսզի մնացածների աչքը վախեցնի, ի վերջոյ, նման յայտարարութիւնները ֆէյսբուքում եզակի չեն: Կարծիքներ հնչեցին, որ իշխանութիւնը ԱԱԾ-ի միջոցով 2018-ին ընդունալ ժողովրդի վախն է ուզում բռնել, որպէսզի աւելորդ խլրտոցներ քաղաքական առանցքային գործընթացների առիթով չբարձրանան: Սակայն քիչ անց տեսակէտ հնչեց, թէ նոր խմբավորումը Սասնա ծռեր-2 է, աւելին այդ կեղծ օգտատիրոջ ֆէյսբուքեան ընկերների ցանկում են Հիմնադիր խորհրդարանի մի խումբ անդամներ, ինչպէս նաեւ Ժիրայր Սեֆիլեանի «Ճակատի» անդամները: Ուշագրաւ է, որ այդ կեղծ էջում մամուլից բազմաթիւ հրապարակումներ է տեղադրուել «Սասնա ծռերին» վերաբերող եւ տարբեր գրառումներ արել:

Մի քանի մէջբերում խնդրոյ առարկա էջից. «Երբ իշխանութիւնները իւրային չեն, երբ չկա արդարագատութիւն, հասարակութեան բազուկը պէտք է պատժել կարողանայ օրէնքի վրայ բռնացողներին: Ազգային դիմադրութեան գլխաւոր օղակներից մէկն էլ այսօր մեր քաղաքացիներն են, որոնք բացարձակապէս իրաւունք չունեն նահանջելու եւ ընկրկելու խունտայի հայրենադաւնների առաջ:

«ՄՀԱ-ի մարտավարութեան ներքոյ մինչեւ 45 տարեկան 50 կարգապահ հայ մարտիկներ կարող են ջախջախել բռնապետական բուրգն ու ահ ու սարսուռ տարածել իրենց «լաւ տղու» տեղ դրած յանցագործ իշխանաորների սրտերում»:

Ի դէպ, Քուրթեանը ֆէյսբուքում նաեւ շատ լրագրողների ընկերներին ցանկում է, հետեւելով նրա գրառումներին, պարզ է դառնում, որ հիմնականում թիրախաւորուած են ՀՀԿ-ի պաշտօնեաները՝ Սերժ Սարգսեանը, Էդուարդ Շարմազանովը, Յակոբ Յակոբեանը, Հերմինէ Նաղդալեանը, հրապարակումներ կան նաեւ Աժ Պետաիրաւական հարցերի յանձնաժողովի նախկին անդամ Յովհաննէս Սահակեանի մասին եւ այլն:

Ի վերջոյ, օրուայ երկրորդ կեսից կապի դուրս եկաւ նաեւ ինքը՝ Քուրթեանը, նա չհերքեց, որ ՀՀ իրաւապահների կողմից հետախուզուող անձը ինքն է, բայց չընդունեց իր եւ նշուած կազմակերպութեան կապը, ասաց, որ ինքը ոչ մի խումբ չի ունեցել, ընդամենը ունեցել է մի միտք, որը սարսափի է մատնել իշխանութիւններին:

Այն, որ ֆէյսբուքեան այս էջում ահաբեկչական կոչեր հնչել են, որեւէ մէկը չի կարող հերքել: Յանկացած նորմալ պետութիւնում նման հրապարակային կոչերի պայմաններում իրաւապահ մարմիններն, անշուշտ, անելիք ունեն: Սակայն դա պէտք է իրականացնել այնքան ճշգրիտ, որպէսզի կասկածի նշոյլ չառաջանայ: Յատկապէս, որ մեր ԱԱԾ-ն բազում անվտանգութեան առիթներ է տուել իր գործունէութեան առումով:

Վերադառնալով ֆէյսբուքեան էջին ու նրա ընկերներին, որոնք ակամայից յայտնուել են հարուածի տակ եւ կան կարծիքներ, որ սա Սասնա ծռեր-ի գործի շարունակողներն են: Հիմնադիր խորհրդարանի մի քանի անդամներ շտապեցին հերքել իրենց կապի մասին, ասելով, որ ընդամենը ՖԲ ընկերներ են: Միանշանակ, պէտք է կասկածել այդ հաւաստիացումներին, որովհետեւ քիչ, թէ շատ յայտնի մարդիկ՝ լինեն լրագրողներ, քաղաքական-հասարակական գործիչներ էթիկային զոհ գնալով ընդունում են ընկերութեան ցանկացած յայտ, որէսզի մեծամիտի, գոռոզի տպաւորութիւն չթողնեն: Ի վերջոյ, հնարաւոր է ԱԱԾ-ից ներդրուած ցանկացած նման մէկը ցանկացած մէկին ներքաշել նմանատիպ պատմութեան մէջ, իսկ յետոյ պարզուի, որ բոլորի աչքի առաջ ահաբեկչական խումբ է գործել:

«ՀԱՅԵԼԻ»

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Սերժ Սարգսեանի վերջին ելույթներն ու հարցազրոյցները վերստին աշխուժացրին խօսակցութիւնը նրա յետնախագահական ճակատագրի, վարչապետ լինելու հնարաւորութեան, ըստ այդմ Կարէն Կարապետեանի դերակատարութեան, Սարգսեան-Կարապետեան հնարաւոր կամ մտացածին դիմակայութեան վերաբերեալ:

Խոշոր հաշուով, այդ համատեքստում առկայ է մի հարց, որն ունի առանցքային նշանակութիւն: Կարէն Կարապետեանը մշտապէս յայտարարում է, թէ պատրաստ է 2018 թուականի Ապրիլից յետոյ լինել վարչապետ կամ մնալ վարչապետ: Մինչդեռ նա կարծես թէ չի արտայայտուել առաւել էական հարցադրման մասով՝ իսկ ցանկանում է լինել կամ մնալ վարչապետ:

Մի բան է պատրաստ լինելը, մէկ այլ բան է ցանկութիւն ունենալը: Օրինակ, Կարէն Կարապետեանն ունի՞ որոշում, որ անելու է հնարաւորը 2018 թուականին վարչապետ լինելու համար, թէ՞ նա պատրաստ է լինել վարչապետ, եթէ Սերժ Սարգսեանի մօտ լինելը չստացուի, այսինքն Սերժ Սարգսեանը չկարողանայ արտաքին ուժային կեդրոնների հետ յարաբերութիւններում հասնել նրան, որ նախագահի պաշտօնից յետոյ վարչապետի պաշտօնին անցնելը լինի միջազգայնօրէն լեգիտիմ որոշում:

Սերժ Սարգսեանի վարչապետութեան հեռանկարը գլխաւորապէս դիտարկուում է Կարէն Կարապետեանի հետ հակադրութեան համատեքստում: Այսինքն, որպէսզի Սարգսեանը դառնայ վարչապետ, նա պէտք է «յաղթի» Կարէն Կարապետեանին, անի այնպէս, որ Կարապետեանը չկարողանայ մնալ վարչապետ:

Ու քանի որ դիտարկումների համատեքստը դա է, կամ գոնէ գերակայ համատեքստը, ապա այդ իսկ պատճառով էլ առանցքային հարցը ոչ թէ Կարէն Կարապետեանի պատրաստ լինելն է՝ մնալ վարչապետ 2018-ի Ապրիլին, այլ նուազագոյնը գոնէ մնալու ցանկութիւն կամ որոշում ունենալը: Որովհետեւ դրանից յետոյ էլ կայ հարցը, թէ արդեօք Կարէն Կարապետեանը պատրաստ է պայքարել այդ պաշտօնի համար:

Իսկ այդ պայքարը ենթադրում է նուազագոյնը երեք հարթութիւն՝ հանրային պահանջարկ, պայքար իշխանական համակարգի ներսում, եւ պայքար արտաքին ուժային կեդրոնների աջակցութեան համար: Առայժմ, 2018 թուականի Ապրիլից մօտ 5 ամիս առաջ, Կարէն Կարապետեանը չի դրսևորում պետութեան Առաջին դէմքի կարգավիճակի համար պայքարի ամբողջական պատրաստակամութիւն: Յամենայն դէպս, Կարապետեանը մինչ այժմ չի արտայայտել քաղաքական մօտեցումներ պետութեան անվտանգութեան, արցախեան խնդրի, հայ-թուրքական յարաբերութեան, տարածաշրջանային տնտեսա-քաղաքական եւ անվ-

տանգային համակարգերի վերաբերեալ Հայաստանի տեղի ու դերի մասին պատկերացումներ:

Արդեօք Կարապետեանն այդ ամէնի վերաբերեալ ունի շփումներ իշխանութեան ներսում, ուժային արտաքին կեդրոններում, իսկ հանրութեան առաջ հրապարակային դրսևորումները համարում է աւելորդ, քանի որ հանրային վերաբերմունքի ելակետերը այդտեղ չեն:

Վերջին հաշուով, Սարգսեան-Կարապետեան դիմակայութիւն, որպէս այդպիսին, կարող է լինել աուերեւոյթ: Խորքային իմաստով խնդիրը աւելի լայն է եւ առնչուում է պարզապէս քաղաքական կարողունակութեանն ու համարժեքութեանը: Խոշոր հաշուով, իշխանութեան խնդիրը չի լուծուելու համարակալի կամ արգահատելի կատեգորիաներով: Լուծումը լինելու է կարողունակութեան դաշտում, եւ այդ իմաստով դիմակայութիւնը ոչ թէ այս կամ այն ազգանուն, այլ ազգանունների եւ ներքին ու արտաքին իրավիճակների միջեւ է՝ Սերժ Սարգսեան-իրավիճակ, Կարէն Կարապետեան-իրավիճակ, Վիգէն Սարգսեան-իրավիճակ, Իքսիրավիճակ, Իգրեկ-իրավիճակ:

Ով ունակ գտնուի ամենամեծ եւ տպաւորիչ առաւելութեան հասնելու իրավիճակի նկատմամբ, նա էլ թերեւս կը նուաճի իշխանութիւն ձեւաւորելու ամենալայն հնարավորութիւնը:

Հարցն այն է, թէ ով է ցանկանում այդ հնարաւորութիւնը նուաճել, իսկ ով է ցանկանում ընդամենը ստանալ կամ գնել այդ հնարաւորութիւնը:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻՒՄ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԵ ԱՏԱՊԱՐԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մեջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնի հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԼԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Իշխանութիւնը Մեր Միջոցները Մեր Դէմ Կ'օգտագործէ». ԼԵՆՈՆ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Իշխանութիւնը սեփական միջոցներ չունի, հանրութեան միջոցները պէտք է օգտագործէ ծառայութիւններ մատուցելու եւ երկրի մէջ բարեփոխումներ ընելու համար, սակայն Հայաստանի մէջ հակառակը տեղի կ'ունենայ: «Քաղաքացիական հասարակութեան դերը Հայաստանի մէջ հանրային քաղաքականութեան օրակարգի ձեւաւորման եւ հաշուետու կառավարում ապահովելու մէջ» թեմայով հանրային քննարկման ժամանակ ըսած է Կիւմրիի Լրագրողներու «Ասպարէզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղեանը:



«Ասպարէզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղեան

«Ասպարէզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղեանը մեզ ասեն՝ ցտեսութիւն, շնորհակալութիւն», - ըսած է Բարսեղեանը:

Անոր համաձայն, քաղաքացիական հասարակութեան ընելիքը պէտք է ըլլայ այն, որ հասարակութեան գիտակցութեան մէջ խոր նստեցնէ այն գաղափարը, որ իշխանութիւնը սեփական միջոցներ չունի եւ միշտ կ'օգտագործէ հանրութեան միջոցները: Պէտք է նաեւ զարգացնել եւ ամրապնդել հետաքննական ու վերահսկողութեան գործիքները:

«Ճակատը» Մտադիր է Ժողովուրդին Համոզել Ժողոց Դուրս Գալ Եւ Հարցերը Լուծել

«Ժողովրդավարական հայրենիք» կուսակցութեան նախագահ Պետրոս Մակէյեանը, որ նաեւ «Յանուն Հայաստան պետութեան ճակատ»-ի անդամ է, Հայաստանի մէջ տիրող ներքաղաքական իրավիճակը բնութագրած է՝ յարաբերական անդորր՝ ամպրոպէն առաջ:

Ան նշած է, որ Ապրիլին, երբ լրանայ Սերժ Սարգսեանի պաշտօնավարման ժամկէտը, պայքար պիտի սկսի խորհրդարանական դարձած երկրի վարչապետի պաշտօնին համար. «Իմ տպաւորութեամբ Սերժ Սարգսեանը արեւմուտքի համաձայնութիւնը ստացել է, դա են վկայում իր ելոյթները, որ դարձել է կաշառակերութեան դէմ պայքարի ջատագով, մարդու իրաւունք-

ներից է խօսում», - աւելցուցած է Պետրոս Մակէյեանը, նշելով, որ նախագահ Սարգսեան այժմ կը փորձէ Ռուսաստանի հետ հարցերը կարգաւորել:

Իսկ Ժիրայր Սեֆիլեանի առաջարկով ստեղծուած «Յանուն Հայաստան պետութեան ճակատ»-ն, ինչպէս նշած է Մակէյեան, այս օրերուն կ'աշխատի ճանապարհային քարտեզ ստեղծելու ուղղութեամբ. «Մեր հիմնական գործընկերը հանրութիւնն է, ուրիշ հնարաւորութիւն չկայ: Մեր խնդիրն է հաշուած օրերի ընթացքում ժողովրդին համոզել, դուրս բերել փողոց եւ հարցերը լուծել, այս ճանապարհն ենք ընտրում», - յայտարարած է Պետրոս Մակէյեանը:

Ուսանողները Չեն Ընդունիր Իշխանութեան Կոչն Ու Կը Շարունակեն Հարցադուր

Իշխանութիւնները «Յանուն գիտութեան զարգացման» նախաձեռնութեան անդամներուն կոչ կ'ընեն դադարեցնել 18 Դեկտեմբերին մեկնարկած հացադուլն ու վերադառնալ բանակցութիւններու սեղան:

Ազգային ժողովի փոխնախագահ Հտուարտ Շարմազանով «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ կարծիք յայտնած է, թէ ուսանողներու հետ խորհրդարանէն ներս կազմակերպուած կ'ըլլայ սեղան ձեւաչափով նախորդ հանդիպման դրական առաջընթաց արձանագրուած է եւ որ Կառավարութիւնն այժմ ալ պատրաստ է շարունակել քննարկումները:

«Հիմա էլ խնդրում եմ իրենց դադարեցնել հացադուլը, վերադառնալ կառուցողական փուլ», - ըսած է ան:

Հանրապետական մէկ այլ պատգամաւոր՝ Հրայր Թովմասեան իր հերթին ընդգծած է, որ բանակցութիւնները միշտ ալ նախընտրելի են՝

բողոքի ծայրայեղ միջոցներէն: - «Ինչ-որ լուծումներ, իմ տպաւորութիւնը այնպիսին էր, որ նշմարում է: Կոչ եմ անում դադարեցնել հացադուլը եւ շարունակել քննարկումները արդիւնաւէտ լուծումներ գտնելու համար», - «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է պատգամաւորը:

Տարկէտման իրաւունքի պահանջման համար ԵՊՀ լսարաններէն մէկուն մէջ փակուած Դաւիթ Պետրոսեանն ու Յակոբ Աւագեանը մինչդեռ յայտարարած են, որ պիտի չդադարեցնեն հացադուլը եւ մտադիր են ԲՈՒՀ-ի մէջ գիշերել, մինչեւ որ իշխանութիւնը բաւարարէ իրենց պահանջը:

«Մենք ասել ենք, որն է մեր պահանջը: Երբ որ սպառնիչ պատասխան տան, նոր կը մտածենք յետագայ քայլերի մասին», - յայտարարած է Պետրոսեան:

Հացադուլի առաջին գիշերը ըստ Դաւիթ Պետրոսեանի անցած է առանց միջադէպերու:

Իրաւապաշտպանի Կարծիքով Ժողովուրդին Վերածած Են Հայաստանի

Վերջին շրջանին Հայաստանի մէջ ընտրողին կամաց-կամաց քուէարկող դարձուցին: Ասոր վերջին ապացոյցը այս տարուան 2 Ապրիլի ընտրութիւններն էին, որ իրականութեան մէջ քուէարկութիւն էր: Այս մասին «Քաղաքացիական հասարակութեան դերը Հայաստանի մէջ հանրային քաղաքականութեան օրակարգի ձեւաւորման եւ հաշուետու կառավարում ապահովելու մէջ» թեմայով հանրային քննարկման ժամանակ ըսած է իրաւապաշտպան Աւետիք Իշխանեանը:



Իրաւապաշտպան Աւետիք Իշխանեան

«Ինչպէ՞ս անցկացուց այդ քուէարկութիւնը՝ ֆինանսական, թէ վարչական ռեսուրսներով (միջոցներով), կարեւոր է: Կարեւորն այն է, որ ապրիլի 2-ին մենք ընտրողին դարձրեցինք հպատակ: Եւ քաղաքական ուժերն ի վերջոյ դարձան վերահսկելի ու կառավարող», ըսած է Իշխանեանը:

Ան նշած է, որ Հայաստանի մէջ պաշտօնեաները յատկապէս վերջին շրջանին անընդհատ կոչ կ'ընեն չքաղաքականացնել դէպքերը:

«Հարցը հետեւեալն է՝ արդեօք քաղաքականութեամբ պէտք է զբաղուեն միայն քաղաքական գործիչները: Ոչ, քաղաքական գործիչները ձգտում են իշխանութեան, իսկ միւսները զբաղուած են քաղաքականութեամբ՝ առանց ձգտելու իշխանութեան: Այս տարբերութիւնը շատ յստակ է: Խօսքը հետեւեալի մասին է՝ պետութեան մէջ ժողովուրդը պէտք է զբաղուի քաղաքականութեամբ, թէ ոչ: Եթէ անցնենք Հայաստանին, ապա մեր Սահմանադրութեան հռչակագրա-

յին մասը մեզ տալիս է այդ իրաւունքները: Այնտեղ հռչակուած է իրաւական պետութիւն, դա ենթադրում է, որ Հայաստանում ոչ թէ հպատակներ են, այլ քաղաքացիներ, որոնք ունեն իրենց իրաւունքները եւ նաեւ քաղաքականացուած ազգ են: Ժողովրդավարական պետութիւնը հենց ենթադրում է քաղաքականացուած ազգ», - ըսած է ան:

Իրաւապաշտպանի խօսքով, Հայաստանի մէջ սակայն իրականութիւնը այլ է: «Մեր երկրում հետեւողականօրէն վարում է քաղաքացուն հպատակ դարձնելու քաղաքականութիւն: Իսկ իշխանութեան մէջ չգտնուող, բայց քաղաքականութեամբ զբաղուող քաղաքացիական հասարակութեան նկատմամբ հակաքարոզչութիւն է տարւում» ըսած է Իշխանեան:

«Ելքը» Դիմած է Ծառուկեան Դաշինքին՝ Նախագահի Իրենց Թեկնածուին Սատարելու

Ելք դաշինքը նախագահի թեկնածու առաջադրելով, կը փորձէ ցոյց տալ, որ կրնայ իշխանութեան հակադէմ ըլլալ եւ պատրաստ է իր վրայ պատասխանատուութիւն վերցնել՝ ղեկավարելու երկիրը: Այս մասին Ազգային ժողովէն ներս լրագրողներու հետ զրոյցի ժամանակ ըսած է Ելք խմբակցութեան պատգամաւոր Արամ Սարգսեանը:



«Ելք» խմբակցութեան պատգամաւոր Արամ Սարգսեան

Ելք ընդդիմադիր դաշինքը նախագահի թեկնածու առաջադրած է Արտակ Զեյնալեանը եւ Ծառուկեան դաշինք խմբակցութեան դիմած է, որպէսզի սատարեն իրենց թեկնածուին: Արամ Սարգսեան ըսած է, որ իրենք այսպիսով կ'ուզեն ցոյց տալ, որ որպէս ընդդիմութիւն պատրաստ են մասնակցել քաղաքական գործընթացներուն, ունին համապատասխան միջոցներ եւ ծրագրային նպատակներ:

«Կայ իշխանութեանը գուգահեռ գործող համակարգ, որը պատրաստ է իր վրայ պատասխանատուութիւն վերցնել: Իսկ թէ գործընթացներն ինչպէս կը ստացուեն՝ չափողուած, թէ? անչափող, դա արդէն ժամանակի խնդիր է: Մենք գտնում ենք, որ այս առաջադրումը Ելք դաշինքի կողմից միանշանակ դրական ազդեցութիւն է ունենալու մեր դաշինքի համար», - ըսած է ան:

Հարցին, թէ թերեւս իրենց բանակցութիւններու արդիւնքով յստականայ, թէ՛ իրօք Ծառուկեան դաշինքը ընդդիմադիր ուժ է, թէ ոչ, Արամ Սարգսեան պատաս-

խանած է. «Մենք ուզում ենք ցոյց տալ, որ արժանի ուժ ենք՝ իշխանութեանը փոխարինելու համար: Իսկ ով է ընդդիմադիր, թէ ընդդիմադիր է, իրենց հարցրէք: Այսօր գործընթաց է գնում, մենք դիմել ենք Ծառուկեան դաշինքին, իրենք ԱԺ-ում ընդդիմադիր խմբակցութեան բոլոր հնարաւորութիւններից օգտուել են, հետեւաբար փաստացի մեր երկրի օրէնքներով իրենք ընդդիմադիր են: Դա իրենց որոշելու խնդիրն է՝ կը պաշտպանեն մեր թեկնածուին, թէ այլ մէկին: Մենք մեր քայլն արել ենք, մենք գտնում ենք, որ Արտակ Զեյնալեանն արժանի մարդ է՝ նոր Սահմանադրութեամբ ՀՀ նախագահի պաշտօնը զբաղեցնելու համար», ըսած է Արամ Սարգսեանը:

# ԼՈՒՐԵՐ

## ՀՀ-ԵՄ Նոր Համաձայնագիրը Երկու Կողմերուն Համար Այլ Մեկ Քայլ Առաջ Էր». Գերմանացի պատգամաւոր

Գերմանիոյ Պոլնտեսթակի (խորհրդարան) պատգամաւոր, Գերման-հայկական ֆորումի (խորհուրդ) նախագահ Ալպերթ Վալթեր կը կարծէ, որ Հայաստան-Եւրոմիութիւն նոր համաձայնագիրը երկու կողմերուն համար ալ մէկ քայլ առաջ էր: Գերմանացի պատգամաւորը այս մասին յայտարարած է «Քոնրատ Ատենաուերը» հիմնադրամի եւ ՀՀ Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու մշտական լանձնա-ժողովի համատեղ նախաձեռնութեամբ երէկ կազմակերպուած քննարկման ժամանակ:



Գերմանիոյ խորհրդարանի պատգամաւոր Ալպերթ Վալթեր

«Հայաստանը Գերմանիոյ համար կը դիտարկուի որպէս դրական երկիր՝ մասնաւորապէս նախորդ տարի Հայոց ցեղասպանութեան ճանաչումէն ետք: Կը կարծեմ, որ վերջին տարիներու ընթացքին երկու երկիրներու յարաբերութիւնները աւելի աշխոյժացած են», -նշած է Եւրոպացի գործիչը:

Ալպերթ Վալթերի խօսքով՝ Եւրոմիութիւնը Հայաստանէն կայուն եւ ժողովրդավար կառավարութիւն կ'ակնկալէ:

«Մենք պիտի օգնենք մեզ հասանելի բոլոր ուղղութիւններով՝ այն ոլորտներուն մէջ, որ կրնանք, եւ մասնաւորապէս, շեշտը պիտի դնենք կրթութեան ոլորտի վրայ, որու միջոցաւ աւելի շատ նպատակներ կը կարենանք իրկա-

նացնել», -ըսած է գերմանացի քաղաքական գործիչը:

Հարցին, թէ ի՞նչ կը մտածէ Եւրոմիութիւնը Հայաստանի մասին, որպէս՝ Եւրասիական տնտեսական միութեան եւ Եւրոմիութեան միջեւ կոնքրետ, ան պատասխանած է.

«Կը կարծեմ, որ Եւրոպացիները տուեալ դատողութիւնը շատ խելամիտ կը համարեն, եւ այո, մենք կ'ողջունենք, երբ երկկողմանի համագործակցութիւնը յաջողած կ'ըլլայ, քանի որ այդպիսով, մենք կը կարողանանք հասնիլ այն նպատակին, որ Հայաստանը որպէս կամուրջ ծառայէ նաեւ այդ երկու միութիւններուն միջեւ»:

## «Հայաստան Եւ Ապահովագրուած Չէ Ահաբեկչութենէն». ԱԱԾ Նախկին Փոխտնօրէն

Ազգային անվտանգութեան ծառայութեան նախկին փոխտնօրէն՝ խորհրդարանի պաշտպանութեան եւ անվտանգութեան յանձնաժողովի անդամ Ֆելիքս Յոլակեանի համոզմամբ, որեւէ երկիր ահաբեկչութենէն ապահովագրուած չէ, «այդ շարքին նաեւ Հայաստանը»:



խորհրդարանի պաշտպանութեան եւ անվտանգութեան յանձնաժողովի անդամ Ֆելիքս Յոլակեան

Անցեալ շաբաթ Ազգային անվտանգութեան խորհուրդը հաւանութիւն տուած էր ներկայացուած՝ «Հայաստանի Հանրապետութեան մէջ ահաբեկչութեան դէմ պայքարի ազգային ռազմավարութեան դրոյթներու իրականացումը ապահովող միջոցառումներու ծրագիր-ժամանակացոյց»-ի նախագիծին եւ կառավարութեան յանձնարարած էր՝ սահմանուած կարգով ընթացք տալ անոր: Հարցի գեղուցման ժամանակ նշուած է, որ դեռ 2012-ին հաստատուած ծրագիրը կատարելագործման անհրաժեշտութիւն ունի, հաշուի առնելով աշխարհաքաղաքական ներկայ գարգացումները, տարածաշրջանի մէջ ահաբեկչական սպառնալիքներու բարձր մակարդակը, ինչպէս նաեւ ահաբեկչութեան զարգացման եւ ձեւափոխութեան միտումները:

«Ֆէյսպուք»-ն այսօր շատ ուժեղ դեր է կատարում այս հարցում, եւ մարդը դրանից օգտուում է», - նշած է ԱԱԾ նախկին փոխտնօրէնը:

Յիշեցնենք, որ Անվտանգութեան խորհուրդի նիստէն մէկ օր առաջ ԱԱԾ-ն հաղորդագրութիւն տարածած էր, նշելով, թէ յիշեալ անձը Հայաստանի իրավիճակը ապակայունացնելու, պետական իշխանութեան մարմիններուն վրայ ապօրինի ճնշում գործադրելու, իրաւապահ մարմիններու եւ այլ պաշտօնատար անձերու մահուան կամ ծանր մարմնական վնասուածքներ պատճառելու, հրկիզումներ, պայթումներ եւ այլ գործողութիւններ իրականացնելու նպատակով, մարդ հաւաքագրելով փորձած է ստեղծել յանցաւոր համագործակցութիւն՝ անոր մասնակից դարձնելով ինչպէս Հայաստանէն, այնպէս ալ անոր սահմաններէն դուրս բնակող ազգութեամբ հայ քաղաքացիներուն: Ահաբեկչական գործողութիւններ նախապատրաստելու մեղադրանքով ԱԱԾ-ն ԱՄՆ քաղաքացիին նկատմամբ հետախուզում յայտարարած է:

«Ազատութեան» այն հարցին, թէ Հայաստան առաւելապէս ներքին, թէ արտաքին ահաբեկչութեան վտանգներու առջեւ կարգնած է, Ֆելիքս Յոլակեան պատասխանած է, թէ չի կրնար ըսել՝ ուրիշ ինչ պէտք է սպասել: Այդուհանդերձ, ան յիշատակած է ԱԱԾ-ի կողմէ յարուցուած քրէական գործը, որուն համաձայն, ազգութեամբ հայ ԱՄՆ քաղաքացիին ահաբեկչութիւն նախապատրաստած է Հայաստանի մէջ:

«Տեսաք՝ ԱԱԾ-ն հանդէս եկաւ յայտարարութեամբ, պարզ նշել էր կոչեր եւ այլն, որոնք ահաբեկչութեան նշաններ են իրենց մէջ պարունակում: Դուք գիտէք, որ

## Հայ-Թրքական Արձանագրութիւններուն Վերաբերեալ Նալպանտեանի Յայտարարութիւնը Լայն Արձագանք Գտած է Թուրքիոյ Մէջ

Յունաստան կատարած այցի շրջագիծէն ներս Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալպանտեանի յայտարարութիւնը հայ-թրքական արձանագրութիւններուն վերաբերեալ լայն արձագանք գտած է թրքական լրատուամիջոցներուն մէջ: Բազմաթիւ թերթեր Նալպանտեանի յայտարարութիւնը



հրատարակած են վերնագրերով: Ինչպէս կը հաղորդէ «Արմենիփրես»-ը, մեծ տարածում ունեցող թուրքական «Հիւրիէթ» թերթը մասնաւորապէս մէջբերած է Նալպանտեանի հետեւեալ խօսքերը. «Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սեպտեմբերին յայտարարել է, որ Երեւանն առ ոչինչ է համարելու արձանագրութիւնները: Այդ ժամանակից ի վեր դրանց վաւերացման ուղղութեամբ որեւէ դրական քայլ չի կատարուել: Այդ իսկ պատճառով 2018 թուականի գարունը դիմաւորելու ենք առանց արձանագրութիւնների»:

Հեցուցած է, որ արձանագրութիւնները ստորագրուած էին Զուլիգերիոյ միջնորդութեամբ:

Նալպանտեանի յայտարարութիւնը տեղ գտած է մի շարք այլ թրքական լրատուամիջոցներու էջերուն վրայ, ինչպէս Sputnik-ի թրքական ծառայութիւնը, «Զումհուրիէթ»-ը, CNN Turk-ը, Gazete Duvar-ը, Bianet-ը, MyNet.com-ը, Haberler-ը, Karar-ը եւ այլն:

Յունաստանի արտաքին գործոց նախարարութեան ներս Նալպանտեան խօսելով Հայաստանի եւ Թուրքիոյ յարաբերութիւններու մասին, յիշեցուցած է, որ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի նախաձեռնութեամբ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու կարգաւորման գործընթաց սկսած էր, որ հանգեցուց 2009-ի Հոկտեմբերին Զիւրիխի մէջ արձանագրութիւններու ստորագրման:

## Ընդդիմադիր Կուսակցութիւնը կը Պատրաստուի Հայոց Ցեղասպանութեան ճանաչման Մասին Օրինագիծ Ներկայացնել Քննարկ

Իսրայէլի ընդդիմադիր «Եշ Ատիդ» կուսակցութեան առաջնորդ Յաիր Լապիդ յայտարարած է Հայոց ցեղասպանութեան ճանաչման մասին Քննարկման ներս բանաձեւ ներկայացնելու իր կուսակցութեան մտադրութեան մասին, կը յայտնէ Times of Israel թերթը:

Յաիր Լապիդ ըսած է, որ Իսրայէլի եւ Թուրքիոյ միջեւ հաշտեցումը դիւանագիտական սխալ էր, նաեւ կոչ ըրած է «Թաղել» Թուրքիա գաղատարի նախագիծը եւ աջակցիլ «անկախ Քուրտիստանի պետութեան ստեղծման»:

Լապիդ Թուրքիոյ նախագահ Ռեժէփ Թայիփ Էրտողանին քննադատած է, որ ան Հայոց ցեղասպանութիւնը չէ ճանաչած: «Անոնք, որոնք կը ժխտեն Հայոց ցեղասպանութեան ժամանակ երեխաներու սպանութիւնը, չպէտք է բարոյականութիւն քարոզեն», նշած է Լապիդ:

Վերջին օրերուն Իսրայէլի քաղաքական գործիչները խստօրէն կը քննադատեն Էրտողանը, ԱՄՆ նախագահ Տոնալտ Թրամփի կողմէ Երուսաղէմը Իսրայէլի մայրաքաղաք ճանչնալուն ի պատասխան, քաղաքը Պաղեստինի մայրաքաղաք հռչակելու մասին անոր կատարած առաջարկին պատճառաւ:

## Հայաստանի Եւ ԱՄՆ-ի Միջեւ Առեւտուրի Ծաւալները Աւելացած Են 35 Տոկոսով

Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ առեւտուրի ծաւալները այս տարուայ Յունուար-Հոկտեմբեր ամիսներուն աւելացած են 35 տոկոսով: Այս մասին հաղորդած է Երեւանի մէջ Ամերիկայի դեսպանատունը:

Երկու երկիրներու միջեւ առեւտրային շրջանառութիւնը նոյն ժամանակամիջոցին հասած է 99,5 մլն տոլար:

ԱՄՆ դեսպանատունը կը տեղեկացնէ, որ Հայաստանը յաջող արտահանման խթան է եւ Ամերիկայի արտոնութիւններու ընդհանուր համակարգը թոյլ կու տայ շատերուն առանց մաքսատուրքերու ապրանք հասցնել Միացեալ Նահանգներ:

### Թուրքիան կը Պահանջէ Դադրեցնել ԱՄՆ-ի մէջ Էրտողանի Վարչակազմը Մերկացնող Դատավարութիւնը

Էրտողանի վարչակազմի գալուստը ԱՄՆ-ի մէջ իրանական ծագում ունեցող թուրք գործարարի մասնակցութեամբ դատական լուծմանը շուրջ օր-օրի կը մեծնայ:

Պաշտօնական Անգարան պիտի դիմէ ամերիկեան իշխանութիւններուն՝ պահանջելով դադարեցնել գործարար Ռեզա Ջարապի Նիւ Եորքի դատարանէն ներս շարունակուող դատավարութիւնը: Այս մասին «24 TV» հեռուստատեսութեան եթերին յայտարարած է թուրքիոյ արդարադատութեան նախարար Ապտուլ-Համիտ Կիլը: Անոր խօսքով, իրանի դէմ սահմանուած միջազգային պատժամիջոցները չըջանցելուն ուղղուած բազմամիլիոնաւոր գործարքներու մէջ մեղադրուող Ջարապի դատավարութիւնը, օրինական չէ եւ պէտք է դադարեցուի:

«Մենք չենք կրնար հանդուրժել դատավճիռ մը, որ կը հակասէ թուրքիոյ շահերուն՝ ծանր հարուած հասցնելով ՆԱԹՕ-ի կազմին մէջ գործող երկու մերձաւոր դաշնակիցներու յարաբերութիւններուն», - յայտարարած է թուրքիոյ արդարադատութեան նախարարը:

Անցեալին ոսկիի առքուվաճառքով գբաղուող 34-ամեայ Ջարապը աւելի վաղ ինքնախոստովանական ցուցմունք տուած էր եւ ընդունած, որ իրումբ մը բարձրաստիճան թուրք պաշտօնեաներու հետ օգնած է իրանին շրջանցել ամերիկեան պատժամիջոցներն ու շուրջ մէկ միլիոն տոլարի շահոյթ ստանալ նաւթի եւ կազի վաճառքէն:

Իր մեղքը ընդունած եւ ամերիկեան իրաւապահներուն հետ համագործակցող՝ այժմ որպէս վկայ հանդէս եկող Ջարապը թուրքիացի է իրումբ մը թուրք բարձրաստիճան



պաշտօնեաներու անուններ, այդ շարքին՝ Էրտողանի, պնդելով, թէ անոնց թոյլտուութեամբ իրականացուած են այդ խոշոր գործարքները 2010-2015 թուականներուն:

Իրանի նկատմամբ ամերիկեան միակողմանի պատժամիջոցները կ'ենթադրէին նաեւ Թեհրանը SWIFT համակարգէն զրկել, ինչի պատճառով ալ Իրանը, որ այն ժամանակ նաւթ կը մատակարարէր թուրքիոյ, չէր կարենար իր ապրանքի դիմաց վճար ստանալ: Այդ գումարները կը փոխանցուէին թրքական HALK դրամատուն: Ջարապի խօսքով, ինք օգնած է թրքական պետական դրամատան մէջ պահուող այդ գումարներով ոսկի գնել, որ մաքսանենգ ճանապարհով ուղարկուած է Տուպայ եւ կանխիկ վաճառուած, ստացուած գումարներն ալ ուղարկուած են Իրան:

Նշենք, որ մինչ Ջարապի մասնակցութեամբ դատական լուծմանը մեկնարկը, Էրտողան կը փորձէր Օպամայի եւ Թրամբի վարչակազմերուն համոզել չեղարկել գործը: Դիւանագիտական ճանապարհներով արդիւնքի չհասնելով՝ պաշտօնական Անգարան սկսած է աւելի բարձր յայտարարել, որ Ջարապը կ'իւլէնական է: Թրքական իշխանութիւնները կը պնդեն, որ ամերիկեան դատախազութիւնը Ջարապի գործով հիմք ընդունած է փաստաթղթեր, որոնք կեղծուած են կիւլէնի աջակիցներուն կողմէն:

### Երեւան-Անգարա Բանավէճ

Շարունակուած էջ 1-էն

Թիւններու վերաբերեալ Հայաստանի բացասական դիրքորոշման, թուրքիան հաւատարիմ է Արձանագրութիւններու գլխաւոր դրոյթներուն: Այս Արձանագրութիւնները տակաւին կը գտնուին թուրքիոյ Ազգային մեծ ժողովի արտաքին շարաբերութիւններու յանձնաժողովի օրակարգին վրայ: Անոնց վաւերացման համար, կարեւոր է, որ Հարաւային Կովկասի մէջ բարենպաստ քաղաքական միջնորդութեւ իսրայէլի վարչակազմի հակամարտութեան կարգաւորման գործընթացին մէջ յառաջընթաց ըլլայ՝ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան եւ ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի համապատասխան բանաձեւերու հիման վրայ: Ամէն պարագայի, Հայաստան պէտք է վերջ տայ Ատրպէյճանի տարածքներու ներխուժմանը», - ըսուած է թրքական յայտարարութեան մէջ:

Անգարա նաեւ անդրադար-

ձած է Հայաստանի արտաքին գործոց նախարարի ելոյթի՝ Հայոց ցեղասպանութեանը վերաբերող հատուածին, յայտնելով թէ անոնք «չեն համապատասխաներ ճշմարտութեան»:

Յունական «Էթնոս» թերթին տրուած հարցազրոյցի մը ընթացքին էտոլարը Նալպանտեան պատասխանելով թուրքիոյ նախագահ Ռէճէփ Էրտողանի մէկ յայտարարութեան, թէ պէտք է վերանայի Լոզանի դաշնագիրը, ըսած է թէ, ձեռք ձգուած համաձայնութիւններէն հրաժարելու սովորութիւնը կարծես թէ Անգարայի բնաւորութեան գիծը դարձած է: «Ես չէի ցանկանայ մեկնաբանել որեւէ կոնկրետ պայմանագիր կամ կոնկրետ յայտարարութիւն: Այնուամենայնիւ, ձեռք բերուած պայմանաւորուածութիւնների հետ կանգնելու սովորութիւնը կարծես թէ Անգարայի բնաւորութեան գիծ է դառնում: Մենք կարող ենք հեշտութեամբ չիշել այլ օրինակներ, երբ թուրքիան չի յարգել համաձայնագրերի տակ դրուած իր ստո-

### Թուրք Պատգամաւորը Կապ Ունի Գերմանիոյ մէջ Հայոց Ցեղասպանութեան Ճանաչման Դէմ Բողոքներու Հետ



ZDF հեռուստատեսութեան եւ Stuttgarter Nachrichten թերթի պատրաստած հետաքննութեան արդիւնքներուն համաձայն, Գերմանիոյ կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման դէմ բողոքներու կազմակերպման ետեւը, շատ հաւանաբար, կեցած է թուրք խորհրդարանականը, որը սերտ կապեր ունի թուրքիոյ նախագահ Էրտողանի հետ: Հետաքննութեան համաձայն, թուրքիոյ իշխող կուսակցութեան անդամ փողով ապահոված է Գերմանիոյ մէջ բուցքամարտիկներու խմբաւորումը, որպէսզի գէնք գնեն եւ ցոյցեր կազմակերպեն ու հետապնդեն թուրքիոյ նախագահ Էրտողանը քննադատողներուն, կը յայտնէ Deutsche

Welle հեռատեսիլի ալիքը: Մեթին Քուլունք ուղղակի եւ կամ երրորդ կողմի մը միջոցաւ յատկացումներ կատարած է թուրք ազգայնականներու Osmanen Germania կազմակերպութեան, որ ամբողջ Գերմանիոյ տարածքին ունի 20 գրասենեակ եւ 2500 անդամ: Հետաքննութիւնը հիմնուած է հեռախօսային խօսակցութիւններու վերլուծութեան եւ խումբին հետեւելու ոստիկանութեան տուեալներուն վրայ: Ոստիկաններու համաձայն, Քուլունք Osmanen Germania կազմակերպութեան հրահանգած է հետապնդել Գերմանիոյ մէջ բնակող քուրտերն ու էրտողանի քննադատները:

### Հնչակեան Ներկայացուցիչներու Հանդիպումները



Հնչակեան պատուիրակութեան ընդլայնուած հանդիպումը Ռուսաստանի Հայ համայնքի ներկայացուցիչներու հետ

Շարունակուած էջ 1-էն

ներ ունենալ հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ՝ համահայկական կարեւորագոյն հարցերու շուրջ միասնական տեսակէտ եւ դիրքորոշում ձեռք բերելու համար: Նոյն օրը ՄԴՀԿ պատուիրակութիւնը հանդիպած է հայ համայնքի աշխույժ ներկայացուցիչներու եւ համայնքային այլ գործիչներու հետ, որոնք ընթացքին ներկայացուած է Հնչակեան կուսակցութեան յառաջիկայ ծրագրերն ու նպատակները, ինչպէս նաեւ Հայաստանի քաղաքական իրավիճակի, Արցախեան հիմնա-

հարցի եւ Ցեղասպանութեան միջազգային ճանաչման ու թուրքիոյ կողմէ արդարացի փոխհատուցման հասնելու շուրջ կուսակցութեան իրականացուցած աշխատանքները: Հարց եւ պատասխանի միջոցով մէջ անցած հանդիպման ընթացքին Մոսկուայի հայ համայնքի շարք մը ներկայացուցիչներ ցանկութիւն յայտնած են համագործակցիլ ՄԴՀԿ-ի հետ: ՄԴՀԿ պատուիրակները նշած են, որ յառաջիկային պիտի ճշգրտուի ՌԴ-ի մէջ կուսակցութեան ներկայացուածութեան ձեւաչափն ու մօտեցումները՝ հաշուի առնելով երկրի առանձնապատկութիւնները: Ռուսաստանի եւ թուրքիայի միջեւ յարաբերութիւնների կարգաւորմանը»:

# Էրդողանը Ցանկանում Է Ստամբուլը Կրկին Խալիֆաթի Մայրաքաղաք Դարձնել

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Եթէ ուշադիր կարդանք Թրամֆի կողմից Երուսաղէմն Իսրայէլի մայրաքաղաք յայտարարելու ելոյթի տեքստը, կը նկատենք, որ այն ամբողջութեամբ երկիմաստ մտքերից է բաղկացած, որոնք կարելի է մեկնաբանել տարբեր կերպ: Տեքստում որեւէ յստակութիւն չկայ՝ ո՞րը Երուսաղէմն է յայտարարում մայրաքաղաք, թէ՞ ընդամէնը Արեւմտեան Երուսաղէմը (ինչն արաբները չեն վիճարկում): Ե՞րբ է դեսպանատունը տեղափոխուելու Երուսաղէմ (ինչը կարելի է անել ընդամէնը մի քանի օրում): Նրա երկիմաստ ձեւակերպումները կարելի է երկար շարադրել: Սակայն մէկ բան յստակ է՝ տարիներով կուտակուած «թարախապարկը» այդ յայտարարութեամբ բացուել է: Մերձաւոր Արեւելքում նախկինում կուտակուած բոլոր խնդիրներն ու հակասութիւնները ջրի երես են դուրս եկել, ու մեզ համար յատկապէս կարեւոր է, թէ ի՞նչ կերպով դա կարող է անդրադառնալ մեզ վրայ՝ հաշուի առնելով Արցախի խնդիրը, Թուրքիայի գերակտիւութիւնն այդ հարցում ու դրանից բխող Ատրպէյճանի արտաքին քաղաքականութեան հնարաւոր փոփոխութիւնները:

Փորձենք հասկանալ էրդողանի «տարօրինակ» ակտիւութեան պատճառները, նրա հոետորաբանութիւնը, որն առաջին հաշիւացրից անհետեւ է թուում, սակայն՝ ընդամէնը առաջին հաշիւացրից: Փորձենք հասկանալ էրդողանի «թաքնուած մտքերը», ում են դրանք ուղղուած եւ ինչ է դրանով նա ծրագրում:

Իսրայէլական կայքերը լի են էրդողանի հակահրէական մտքերի մէջբերումներով:

«Նրանք, ովքեր կարծում են, թէ իրենք են Երուսաղէմի տէրը, փայլուն կերպով հասկանում են, որ վաղը չեն կարողանալու ծառերի ետեւում թաքնուել»: Էրդողանը դրանով ակնարկում է իսլամական այն յայտնի մարգարէութիւնը, որ յուրայականները թաքնուելու են ծառերի ու քարերի ետեւում, իսկ քարերն ու ծառերն ասելու են. «Ահա, ուղղահաստ մուսուլման, քարերի եւ ծառերի ետեւում թաքնուած են յուրայականները, սպանիր դրանց»:

«Անատուլ» գործակալութեանը տուած հարցազրոյցում էրդողանն ասել է. «Եթէ մենք կորցնենք Երուսաղէմը, ապա կը կորցնենք



Մեդիան, իսկ եթէ կորցնենք Մեդիան, ապա չենք կարողանալու պահպանել Մեքքան, իսկ եթէ կորցնենք Մեքքան, ապա կը կորցնենք Քաաբան»:

«Մենք Արեւելեան Երուսաղէմն արդէն յայտարարել ենք Պաղեստինի մայրաքաղաք, սակայն մենք չենք կարողացել այնտեղ մեր դեսպանատունը բացել, որովհետեւ Երուսաղէմն այսօր օկուպացուած է: Դարձեալ, մենք կը բացենք այստեղ դեսպանատուն»:

Իսկ ամենահեռուն գնացել է էրդողանի վերահսկողութեան տակ գտնուող Akit հեռուստաալիքի հաղորդավարը՝ եթերում յայտարարելով. «Բոլոր մուսուլմանական երկրները, Թուրքիայի ղեկավարութեամբ, պէտք է միջազգային օրէնքներն անտեսող Իսրայէլի դէմ պատերազմ սկսեն: Ես կարծում եմ, որպէսզի լուծենք Ալ-Ակսա մզկիթի եւ Երուսաղէմի հարցը, պատերազմ է անհրաժեշտ»: Ալ-Ակսա մզկիթը մուսուլմանների երրորդ սրբավայրն է՝ Մեքքայից ու Մեդիանից յետոյ:

Հիմա փորձենք հասկանալ, թէ, դիմելով իսլամական հոետորաբանութեանը՝ իրականում ինչ է ակնարկում էրդողանը: Վերոնշեալ մէջբերումներում «բանալի» արտայայտութիւնը պէտք է համարել «Թուրքիայի գլխաւորութեամբ» միտքը: Այդ արտայայտութեան հիմնական ենթատեքստը հասկանալու համար ստիպուած ենք երկու կարճ պատմական ակնարկ կատարել ՄԱԿ-ի եւ Օսմանեան խալիֆաթի ստեղծման պատմութիւնից՝ մտքում ունենալով Սեմուէլ Հանթինգտոնի «Քաղաքակրթութիւնների բախումը»

յայտնի գիրքը:

1941-ին ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտն առաջ քաշեց «Զորս Ոստիկանների» պլանը, որը հետագայում հիմք հանդիսացաւ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհրդի ստեղծման համար: Դա աշխարհը ազդեցութեան 5 գօտիների բաժանելու ծրագիրն էր, ըստ էութեան՝ համաշխարհային կառավարութեան նման մարմին, որտեղ բոլոր հինգ երկրների համաձայնութեան դէպքում կարելի է գինուած միջամտութեան շնորհիւ ցանկացած երկրում անցանկալի հռչակուած իշխող ռեժիմը փոխել: Կարեւոր է նշել, որ այդ երկրների ցանկում որեւէ իսլամական պետութիւն չկայ, իսկ այդ երկրների բնակչութեան թիւը, ըստ որոշ աղբիւրների, հասնում է 1,6 մլրդ-ի:

Մինչ 1991 թուականը աշխարհը երկբեւեռ էր ու բաժանուած երկու իրարամերժ, «ազատութեան» եւ «հաւասարութեան»՝ մարդկային երկու դարաւոր իդէալների վրայ հիմնուած գաղափարախօսութիւնների: Այդ գաղափարախօսութիւնները կրօն ու քաղաքակրթութիւն չէին ճանաչում, եւ մուսուլմանական, բուդդիստական, քրիստոնէական երկրներն այս կամ այն կերպ փորձում էին կողմնորոշուել այդ երկու գաղափարախօսութիւնների միջեւ:

Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ աշխարհում հարց առաջացաւ. իսկ յետոյ՞ ինչ է լինելու, ի՞նչ գաղափարախօսական ու աշխարհաքաղաքական տեսք է ստանալու համաշխարհային քաղաքականութիւնը: Այդ ժամանակ երկու տեսակետների շուրջ վէճեր

սկսուեցին: 1992-ին ամերիկացի քաղաքագետ ու փիլիսոփայ Ֆրենսիս Ֆուկույաման հրատարակեց իր «Պատմութեան աւարտը եւ վերջին մարդը» գիրքը, որի իմաստն այն էր, որ Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ աշխարհում վերջնականապէս յաղթել են լիբերալ-դեմոկրատական արժէքները, եւ դրանով մարդկութեան սոցիալ-մշակութային էվոլյուցիան աւարտուած է, այլեւս նոր գաղափարներ չեն կարող լինել, դրանք սպառուած են: Սակայն 1993-ին, ի պատասխան Ֆուկույամայի, հրատարակուած է Սեմուէլ Հանթինգտոնի հռչակաւոր «Քաղաքակրթութիւնների բախում» գիրքը: Հանթինգտոնը համարում էր, որ աշխարհը բաժանուած է քաղաքակրթութիւնների, եւ ապագայ պատերազմները մղուելու են ոչ թէ երկրների, այլ քաղաքակրթութիւնների միջեւ: Ըստ Հանթինգտոնի՝ քաղաքակրթութիւնները ձեւաւորուած են կրօնների հիման վրայ: Կրօններն են «գծում» այն հիմնական արժէքները, մտաւոր սխեմաները կամ մատրիցան, որոնք չեն կարող հիմնովին փոփոխուել միւս քաղաքակրթութիւնների ազդեցութեան տակ: Դեռեւս 1992-ից Հանթինգտոնը պնդում էր, որ աշխարհի համար հիմնական վտանգը իսլամական ծայրայեղականութիւնն է:

Դէպքերի հետագայ ընթացքը, կարծես թէ, աւելի հաւանական է դարձնում Հանթինգտոնի տեսակետը:

Այսպիսով, փորձենք հասկանալ, թէ ինչո՞ւ է ակտիւացել էրդողանը եւ ինչո՞ւ է այդպիսի ծայրայեղական ելոյթներով հանդէս գալիս:

Իսլամական աշխարհը պառակտուած է եւ չունի որեւէ առանցքային երկիր, որը կարողանայ նրանց ճակատն առաջ մղել, եթէ պէտք է՝ պաշտպանել միջազգային բարձրագոյն ատեաններում եւ ինչու ոչ՝ յաւակնել դառնալ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհրդի մշտական անդամ: Յանուն արդարութեան պէտք է ընդունել, որ մարդկութեան 1/5-րդը իրաւունք ունի ներկայացուած լինել այդ մարմնում՝ ունենալով վետոյի հնարաւորութիւն:

Իսլամի իդեալը խալիֆաթն է, որի շնորհիւ ամբողջ աշխարհի մուսուլմանները կը միաւորուեն մէկ Ումմայի՝ համայնքի մէջ: Դեռեւս 7-րդ դարից՝ սկսած արաբական նուաճումներից, իսկ հետագայում խաչակրաց արշաւանքների ժամանակ իսլամական աշխարհում

Շար.ը էջ 19

LIFE INSURANCE    INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE    LONG TERM CARE    MEDICARE    DENTAL & VISION    DISABILITY



**M MARONIAN**  
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

Call us today!

**(818) 500 9585**  
**(818) 269 0909**

**Bedros & Siamanto**  
805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815  
MARONIANINSURANCE.COM

### «Կամ - Կամ»ից Յետոյ «Եւ - Եւ»

#### ՍՈՒՐԵՆ ԽՈՒՂԱՆԵԱՆ

Ինչ է սա: Թոյլ, չափազանց զգուշաւոր պետութեան յարմարութեանութիւն, թէ, անկախ եւ ուժեղ պետութեան ճկուն քաղաքականութիւն:

Եւրոտնտեսական միաւորումից յետոյ Եւրոմիութեան հետ միանալը, Հայաստանի իշխանութիւնների վարքագծի մասին, զանազան խորքային դատողութիւնների առիթ ստեղծեց:

Եւրոմիութիւնը եւ Եւրոտնտեսական միաւորումը աշխարհաընկալման առումով տարբեր բնոյթ ունեն:

Եթէ վերջինս աւելի շատ տնտեսական յարաբերութիւնների հենքով կայանալու եւ ծաւալուելու միտում ունի, միւսը Եւրոմիութեան արժեքային համակարգը տարածելու միջոցով աշխարհակալական նկրտումներով տարածելու միտում ունի: Արտաքուստ, մէկը գործում է Ռուսաստանի բռնակալական վարչակարգի հովանու եւ հակողութեան ներքո, միւսը այսպէս կոչուած «ազատութիւն» քարոզող Միացեալ Նահանգների հովանու եւ հակողութեան ներքոյ:

Գիտենք այն, որ այս աշխարհի օլիգարխիկ համակարգի խաղի կանոնները ընդունուած եւ գործում են փողի իշխանութեան գերագոյն հրամանատարութեան հեղինակաւոր տրամաբանութեամբ:

Եթէ պայմանականօրէն մէկը կոչենք «Արեւելք» եւ միւսը «Արեւմուտք» պէտք է նշենք, որ խաղի կանոնները ինչպէս «արեւելքում» այնպէս էլ արեւմուտքում միեւնոյնն է:

Տարբերութիւնը, որը ըստ էութեան գոյութիւն ունի Մշակույթի տարբերութիւնն է: Առաջինը աւարտ անում է «երկաթեայ սրով», երկրորդը «բամբակեայ սրով»: Մէկը գործում է բռի, միւսը նուրբ: Արեւմտամէտ թէ արեւելամէտ, բոլոր վարչակարգերի շարժման վեկտորը, դա ծառայել եւ տուրք տալն է «Փող»ի աստծուն:

Ընդանուր առմամբ, աստուածներին երկրպագելու եւ տուրք տալու փրկիտոփայտութիւնը բացատրուած է նրա ն ապաւինելու եւ խաղաղ ու կենսունակ կեանք ապահովուելու փնտռութեամբ:

Սակայն համաշխարհայնացման պայմաններում ուժեղացող «փողի աստուածը» ինչ է տալիս ժողովուրդներին, եթէ, ոչ, սարսափ, մահ եւ այլասերում: Մի կողմից ծնունդ է տալիս արիւնարբու «խլամական պետութեան» -ը եւ զաղթականութիւնը: Միւս կողմից մեծ ծախսերի գնով պարսպապատում է իրապրելու վայրը՝ սովահար եւ տառապող հարեւաններից պաշտպանուելու համար:

Այս թոհուրէրի մէջ ժողովուրդներին շատ դժուար է լինում անհրաժեշտ արագութեամբ կողմնորոշուել եւ չարիքը բարիքից զանազանել:

Ժողովուրդներին ինքնաձանաչողութիւնը գլխաւոր գործօնն է նետուած մարտահրաւերներին դիմակայելու համար:

Ճանաչելու համար հարկաւոր է

ունենալ ճշմարիտ լուսաորիչներ եւ ունկընդրել նրանց ձայնը, որոնք ոչ մի տուրք չունեն տալու Օլիգարխիկ համակարգին եւ ապրում են ժողովրդի կեանքով:

Անհրաժեշտութեան դէպքում Հայրենի սեղանին, մարտիրոսանում են գոչելով մեծն Սեւակի կոչը «Յանուն վաղուայ ճշտի թող որ լինեմ այսօր սխալ»:

Ինքնաձանաչողութեան համատեքստում դիտարկենք Համահայկական ընդհանուր կերպարի գլխաւոր բաղադրիչները:

Ամէնուրեք առերեսում ենք այն փաստի հետ, որ Հայր կրողն է այն արժեքների, որոնք բխում են ինչպէս Արեւելեան այնպէս էլ Արեւմտեան արժեհամակարգից:

Եթէ նա «մետաքս»-ի ճանապարհին տիրապետեց Արեւելեան ժողովրդի կեանքի ու կենցաղի գաղտնիքներին, Արեւմտեան մարդասիրական արժեհամակարգում, ունեցաւ իր ուրոյն ներդրումը:

Յիշենք Գրիգոր Նարեկացու Մատենի նշանակութիւնը կաթոլիկ եկեղեցու իրականութեան մէջ կամ Միխիթարեան միաբանութեան լուսաւոր փարոսի դերակատարումը, Լորդ Բայրոնների հոգեւոր աշխարհում:

Քանի որ Հայկական լեռնաշխարհը համամարդկային քաղաքակրթութեան օրրանն է եղել, ուստի համամարդկային արժեքների երկու թեւերով տարածուածութիւնը, օրինաչափութիւնների ոլորտից է, եւ վստահ կարելի է ասել, որ Հայկական աշխարհը, կամ ընդհանուր եւ արժեքների համադրման առաքելութիւն ունի:

Եթէ օբիեկտիւօրէն դիտարկենք անգամ մեծ վիպասան «Րաֆֆի»-ի կերտած կերպարը, աներեւակայի ճարտարութիւնների տիրապետող «Նաչապոյի» կերպարը դարձեալ համահայկական ընդհանուր կերպարի բաղադրիչն է:

Որքանով դրական եւ որքանով բացասական, դա այլ խնդիր է: Ճառահատեալ վիճակում «Քարից հաց քամելը» հնարամտութիւնն է պահանջում:

Խորհրդային տարիներին, եթէ «Նաւիարային» քաղաքականութեամբ Ատրպէյճանը միութենական ֆոնդերի բաշխման հարցում հասնում էր որոշակի չափողութիւնների, ապա, Հայաստանը իր «Կոնյակային» քաղաքականութեամբ աւելին էր ստեղծում: Յիշենք «Արփա-Սեւան» թունելի, Երեւանի մեթրոյի եւ հակասալ կառուցյաների կառուցման նախապատմութիւնները, եւ որոշումները ի կայացման շարժառիթները:

Այս ամէնի արդիւնքում, հետեւութիւնը հետեւեալն է՝ Հայր. Ըստ էութեան Երկու եւ ոչ միայն երկու, արժեքների կրողն է եւ Հայաստանում ժողովրդին ծառայող կենսունակ իշխանութեան պարագայում, այն կարող է կամրջուել եւ համադրել այս բոլոր արժեքները: այդ կամրջումը ամբողջական Հայի առաքելութիւնն է յանուն, փրկութեան, ինչպէս Հայ մարդու, այնպէս էլ ընդհանուր մարդկութեան փրկութեան:

### Քարոզարշաւը Մեկնարկեց. Սերժ Սարգսեանի Համար Փորձում Են Հանրային Պահանջարկ Ստեղծել

#### ՍԻՐԱՆՈՅՑ ՊԱՊՅԵԱՆ Հարցազրուցավար

Ջրուցակիցն է քաղաքական մեկնաբան Լեւոն Մարգարեանը - Պարոն Մարգարեան, Սերժ Սարգսեանը յայտարարել է, որ 2018-ին իր քաղաքական ապագան միայն թիմով կ'որոշեն, դեռ կը տեսնեն: Որեւէ յստակութիւն չ'ընտրեց 2018-ի Ապրիլից յետոյ սպասուող իրադարձութիւնների մասով: Միաժամանակ 334-ական պատգամաւորները նշում են, որ Սերժ Սարգսեանին կը խնդրեն դառնալ վարչապետ: 334 սցենարն է. խնդրել Սերժ Սարգսեանին դառնալ վարչապետ:

- Նախ ֆիքսենք. չնայած ընտրութիւնները չեն լինելու եւ վարչապետին ընտրելու է ՀՀԿ-ն. որպէս մեծամասնութիւն, բայց մենք փաստացի գործ ունենք Սերժ Սարգսեանի նախընտրական քարոզարշաւի հետ: Երկրորդ. ցանկացած իշխանութիւն, նոյնիսկ ամենակոտորած պայտուսները, ձգտում է ստեղծել տպաւորութիւն, թէ գործընթացը լեզիտիմ է: Քանի որ այս անգամ ընտրութիւնները չկան, այդ լեզիտիմացման գործընթացը պիտի իրականացնել այլ գործիքներով: Վառ օրինակն Անդրանիկ Մարգարեան քաղաքական դպրոցում Սարգսեանի հանդիպումն էր «փորձագիտական հանրութեան հետ»: Այսինքն հաւաքել մէկ տեղում մարդկանց, ովքեր կամ յարում են իշխանութեանը, կամ աշխատում են աղմուկի տարածմանը կամ էլ ասենք «խիստ լոտալ ընդդիմադիրներ»-ի փաթեթաւորել որպէս հասարակութեան ինտելեկտուալ հատուածի հետ երկխօսութիւն: Նմանատիպ գործիքներով էր աշխատում նաեւ Վիգէն Սարգսեանը. ազգ-բանակ հայեցակարգի «հանրային քննարկումները» ժամանակ: Հաւաքում են անյայտ ծագմամբ ու անունով հետազօտական կենտրոնների փորձագէտների ու ստեղծում հանրային երկխօսութեան էֆեկտ:

Գալով ձեր հարցին. այն, որ Սարգսեանը չի բացում պլանները, տրամաբանական է: Հայաստանի պէս անկայուն քաղաքական համակարգում ամէն բան կարող է մի քանի օրում փոխուել, ու նախապէս յայտարարութիւններ անելը տակտիկապէս սխալ է: Երկրորդ. երբ Սերժ Սարգսեանը հնչեցնում է թիմով կ'որոշենք ձեւակերպումը, նա ըստ էութեան օգտուած է այն գործիքներից, որի մասին խօսեցի. փորձում է կոլեկտիւ որոշման ֆոն ստեղծել: Այլ կերպ ասած, ուղեւորը հետեւեալն է. ես գնում եմ վարչապետութեան ոչ թէ որ ըստ էութեան յաղթել եմ ու ասպարէզից հեռացրել բոլոր մրցակից ուժերին, ոչ թէ որ միանձնեայ դեկալարում եմ ՀՀԿ-ն ու ներքաղաքական կեանքում գրեթէ ամէն բան որոշում միայնակ, այլ որովհետեւ կուսակցութիւնն է այդպէս ուղում: Բնականաբար, ՀՀԿ-ական պատգամաւորները խնդրանքներին շուտով կը միանան նաեւ «փորձագիտական» վերլուծութիւնները, ու ամէն բան կը փաթեթաւորուի որպէս հանրային պահանջարկ:

- Տեսակէտ կայ, որ Սերժ Սարգսեան-Կարպետեան մրցակցութիւն չկայ, կայ տանդէմ: Համամիտ էք:

- Ոչ: Բնականաբար, պաշտօնական խօսքում այդպէս են ներկայացնում, մանաւանդ վերջին շրջանում այդպէս են հակուած ներկայացնել Կարպետեանի կողմնակիցները, որոնց դիրքերը ներքինական պայքարում թուլանում են, ու նրանք փորձում են կոնֆրոնտացիան միջանկեալ կոմպրոմիսի բերել: Բայց տանդէմ լինել չի կարող, եւ սա անձնական հարց է, այլ քաղաքական ու տնտեսական շահերի բախում, որը միայն Հայաստանով չի սահմանափակուած: Սա բաւական ընդգրկուն թեմա է եւ դժուար է մէկ հարցազրուցով այն քննարկել: Միայն նշեմ, որ նոյնիսկ ժամանակին յորջորջուող Սարգսեան-Քոչարեան տանդէմը չի եղել: Սա յաճախ հանրային դիսկուրսի, ընդդիմութեան հետտրամաբանութեան հետեւանքով առաջացող ընդհանրացումներ են, իշխանութեանը դեմոնիզացնելու փորձեր, որոնք սակայն իրերի իրական դրուածքը ներկայացնում են բացառապէս սեւ ու սպիտակ գոյներով, չեն փորձում իշխանութեան բարդ, բազմաբնոյթ ու ոչ միանշանակ պատկերը հասկանալ ու նաեւ փոխանցել հասարակութեանը:

- Եթէ Սերժ Սարգսեանը դառնալ վարչապետ, կը ստացուի իշխանութիւնը Կարպետեանի հետ ազնիւ խաղ չխաղայ՞ց. հաշուի առնելով, որ Կարպետեանը եկաւ բարդ ժամանակահատուածում, եւ «Որս դէմքով» ամբողջ նախընտրական քարոզարշաւն իրականացուցեց:

- Կարծում եմ, Կարպետեանին առնուազն ՀՀԿ-ում ոչ ոք չէր ստիպել դառնալ ՀՀԿ քարոզարշաւի դէմքը: Եթէ նոյնիսկ ինչ-որ մէկը ստիպել կամ յորդորել է, ապա հաստատ ոչ ՀՀԿ-ից: Նպատակը մէկն էր. Կարպետեանը քարոզարշաւով պիտի ուժեղացներ իր դիրքերը ՀՀԿ-ում: Սակայն հայաստանեան ներքինական կեանքում հասարակական կարծիքը ծանրակշիռ հանգամանք է: Աւելի էական են ասենք իշխանութեան ներսում քո ստեղծած ազդեցութեան խմբերը, քեզ հաւատարիմ ուժերը իշխանութիւնից դուրս եւ ներս եւ այլն: Այնպէս է, որ Կարպետեանն է ՀՀԿ-ի համար ապահովել մեծամասնութեան տեղն Աժ-ում, դա արել են ուստի նախապէս պատգամաւորները, իսկ Կարպետեանն ընդամենը այդ ողջ սխեմայի «կուլտուրական»



Եւրո-Կարպետեան Կարպետեան մրցակցութիւն չկայ, կայ տանդէմ: Համամիտ էք:

Երբ իմացայ, որ Մոցի Աստուածաշունչի ընկերութիւնը «Երիտասարդ ընտանիքին Աստուածաշունչը» խորագիրով հրատարակութեան մը ձեռնարկած է, հետաքրքրութիւնս արթնցաւ. նախ՝ քանի որ կիրակնօրեայ վարժարան յաճախած օրերուս նման հրատարակութիւն մը գոյութիւն չունէր, ապա՝ որովհետեւ վերջապէս նոր սերունդի ընտանիքները, որոնք կլանուած են դրամատիրական աշխարհով, իրենց տրամադրութեան տակ ունին իրենց համար պատրաստուած ձեռնարկ մը: Արդարեւ, վերնագիրէն ակներեւ է, որ հրատարակութիւնը ջանք խնայած պէտք չէ ըլլայ մատակարարելու 21-րդ դարու մշակույթին մաս կազմող սերունդի մը, որ ամէն բանի կ'ուզէ առանց արգելքներու տիրանալ, ըլլայ ատիկա առարկայ, գիտութիւն, թէ կարողութիւն:

Եւ ճիշդ էր ենթադրութիւնս: «Երիտասարդ ընտանիքին Աստուածաշունչը» արդարացիօրէն այն հրատարակութիւնն է, որ մանուկ ու պատանի ընթերցողին ձեռքերուն մէջ կը դնէ Աստուածաշունչը՝ արդիականացած: Աստուածաշունչ կարգալը լուր կամ վէպ կարգալու չի նմանիր: Ընթերցողը հոգեպէս ու մտապէս պատրաստ պէտք է ըլլայ Աստուծոյ շունչին՝ զայն ընկալելու համար: Այս հրատարակութիւնը ճամբան կը հարթէ դէպի այդ հոգեմտաւոր պատրաստութիւնը: Կարելի է ըսել, որ այս գործը նախապատրաստական դաշտ մըն է ապագայի Աստուածաշունչ ընթերցողներ արտադրելու, որովհետեւ անիկա ո՛չ թէ դասական ձեւով հրամցուած Աստուածաշունչ մըն է, այլ՝ մանկապատանեկան կազմուածքի յարմար: Պատկերազարդ այս հրատարակութեան մէջ կը գտնենք 20 գլուխներ, որոնցմէ իւրաքանչիւրը բաղկացած է եօթը պատմութենէ:



Պարզեցուած լեզուով կը կարգանք Յիսուսին ծնունդը, իսրայէլացիներուն չարչարանքն ու գաղթը, արարչագործութեան պատմութիւնները, հոգեւոր նախահայրերուն եւ մարգարէներուն պատմութիւնները, Յիսուսի առաքելութիւնը, խօսած առակները, հրաշքները, Երուսաղէմ մուտքը, չարչարանքն ու խաչելութիւնը, յարութիւնը եւ, վերջապէս, քրիստոնէութեան պատգամը: Իւրաքանչիւր պատմութիւն ունի իրեն յատուկ պատկեր, որպէսզի օգտակար դառնայ մանուկին կամ պատանիին՝ երեւակայութեան օգտագործման: Հարկ է նաեւ նշել, որ դիւրին ընթեռնելի է գիրքը՝ թէ՛ իր օգտագործած տառատեսակին ու գոյներուն համար, թէ՛ ալ պարզ լեզուին համար, որուն համար աշխատած են Արտաձէպէճեան (հայերէն շարադրութիւն), Նորա Բարսեղեան (սրբագրութիւն) եւ Մեղրի Շամմասեան (էջադրում): Հրատարակութեան աւարտին յատուկ գրութիւն մըն ալ ուղղուած է ծնողներուն, որպէսզի առաւելագոյն չափով օգտուի ընթերցողը այս արդիական ու ժամանակակից ոճով պատրաստուած գիրքէն:

Մանկավարժական բոլոր յատկութիւնները ունեցող ամբողջական գործ մըն է «Երիտասարդ ընտանիքին Աստուածաշունչը»: Այլ խօսքով, շատ ուրախ էի այս հրատարակութիւնը կարգացած ժամանակս, որովհետեւ ան կապի մէջ դրաւ զիս իմ ներքին մանուկի ու պատանիի հոգիիս հետ, որ տարիներ առաջ կիրակնօրեայ վարժարաններուն մէջ կիրակնօրեայ ուսուցիչներէն Աստուածաշունչէն դրուագներ կ'ընկալէր:

**OFFICE SPACE FOR RENT  
IN PASADENA**  
**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104  
Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506

# ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 85-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՓԱՌԱՇՈՒՔ ՅՈՒՇԵՐԵԿՈՅԻՆ ԱՌԻԹՈՎ

«Գործն է անմահ, լաւ իմացքը, Որ մնում է դարեդար»:

3. ԹՈՒՄԱՆԵԱՄ



## ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ

Երկուշաբթի, Դեկտ. 4, 2017-ին, Հայց Առաքելական Եկեղեցուց Առաջնորդարանի «Արմէն Համբար» վեհաշուք սրահին մէջ, Լոս Անճելոսի հայութիւնը Վարդգէս Պետրոսեանի անունին և վաստակին վայել հոյակապ ձեռնարկով մը նշեց հայ գրականութեան անթառամ փառքերէն, Հայաստանի գրողներու միութեան արժանաւոր և վաստակաշատ երբեմնի նախագահ, թերթերու խմբագիր, բազմաթիւ գիրքերու, առաջնորդող յօդուածներու հեղինակ, հասարակական բազմաբեղուն գործիչ՝ ողբ. Վարդգէս Պետրոսեանի ծննդեան 85-ամեակը:

Ձեռնարկը կազմակերպուած էր Գալիֆորնիոյ գրողներու միութեան ժրջան անդամներուն կողմէ, գլխաւորութեամբ միութեան ատենապետ, մեծանուն գրող, գաղութիս հանրածանօթ «Միփան» երգչախումբի հիմնադիր եւ 40 տարիներու խմբավար՝ Մախսթրօ Հենրիկ Անասեանի:

Այս յիշարժան ձեռնարկը կը վայելէր թեմիս գրասէր, մտաւորական Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի հովանաւորութիւնը և Նորին Սրբազնութեան օրհնաբեր ներկայութիւնը:

Այդ գիշեր, Լոս Անճելոսի մտաւորականութիւնը ու մանաւանդ հայրենածին գրողներու հոծ բազմութիւն մը ողողած էր «Արմէն Համբար» սրահը և անոր յարակից մասնաբաժինները:

Այս գրութեամբ նպատակ չունինք մանրամասնութեամբ նկարագրելու միտքը հարստացնող և Վարդգէս Պետրոսեանի քաղցր յիշատակներով հոգիներ արբեցնող՝ այդ ձեռնարկին մասին: Արդէն ներկաները, որոնք ֆիզիքայէս սրահն էին, մտքով և մտածումներով Վարդգէս Պետրոսեանի յիշատակներով տարուած էին:

Ամէն ինչ հոյակապ էր. հանդիսավար Հենրիկ Անասեան համով-հոտով մէջբերումներով համեմեց ձեռնարկը: Գլխաւոր բանախօսն էր փրոֆ. Արտեմ Սարգիսեան, որ սքանչելի ելոյթով ներկայացուց Պետրոսեան մարդը, գրողը, հասարակական գործիչը և հայրենասէր քաղաքացին: Գործադրուեցաւ գեղարուեստական սքանչելի

յատագիր մը՝ երգի, ընթերցումի և յուշերու պատումով: Սրբազան Հօր փակման սրտաշարժ խօսքը եւ Պետրոսեանի այրիին՝ Սօնա Տիգրանեանի շնորհակալական խօսքերը պարզապէս հոգեխոով էին:

Այդ գիշեր, ձեռնարկի ողջ տեւողութեան յիշեցի Վարդգէս Պետրոսեանի գրականութեան հատորները, որոնք բամբակ օրեր և ժամեր տրամադրած եմ գանոնք յափշտակութեամբ կարդալով «Վերջին ուսուցիչը», «Ապրած և չապրուած տարիներ», «Կրակէ շապիկը», «Մենաւոր ընկուզենին» և «Հայկական էսքիզներ» և «Գարուն» գրական ամսաթերթի թիւերը:

Պետրոսեանի լեզուն հեզասահ, պատկերաւոր, տրամախօսակցական հաճելի և հարուստ գրուցատրութիւններով լեցուն, մեղրահամ հայերէն մըն է ճոխ բառաշարով:


Յաճախ նոյն պարբերութիւնը քանի մը անգամ կը կարդայի, նոյնքան հաճոյք և բաւարարութիւն ստանալով:

Իսկ Լոս Անճելոսի մէջ Վարդգէս Պետրոսեանին անձամբ ծանօթացայ, երբ Թէքէեան Մշակութային Միութեան Հայաստանի շրջանի ատենապետի հանգամանքով Լոս Անճելոս կ'այցելէր: Հոն էր, որ ճանչցայ միտք և ոսկորէ շինուած բարեկիրթ գործիչը, ազգային ժողովի անդամ՝ Վարդգէս Համազասպի Պետրոսեանը: Անոր մէջ կեանք կար ազնիւ հայրենասէր մըն էր, երգելու գեղեցիկ ձայնով օժտուած:

Այդ օրերուն ամէն տեղ կը խօսուէր, թէ ինչպէս գրող Վարդգէս Պետրոսեան համարձակած էր նախագահ Կորպաչեւին հետ վիճաբանութիւն ունենալ, երբ Ատրպէյճանի կողմէ Սումկայթի հայաշինջ արարքը՝ Վարդգէս Պետրոսեան Կորպաչեւին կը ներկայացնէր որպէս «ազգի մը ցեղասպանութիւնը»: Իսկ Կորպաչեւ սինիքաբար համաձայն չէր այդ բնորոշումին:

Վարդգէս Պետրոսեան ծնած էր Օգոստոս 9, 1932-ին, Աշտարակի մէջ: 1954-ին աւարտեց Երեւանի համալսարանը և սկսաւ գրել երիտասարդ տարիքէն: Ընդարձակածաւալ վաստակ մը ունէր, երբ Ապրիլ 15, 1994-ին 61 տարեկանի

# «ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՑԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԴԷՄ» 3-ՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՆԻՍՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ



Հայաստան կը պատրաստուի «Յեղասպանութեան Յանցագործութեան Դէմ» 3-րդ համաշխարհային նիստին: Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար էտուարտ Նալպանտեան այս մասին նշած է Յունաստանի արտաքին գործոց նախարարութեան յարկին տակ ունեցած իր ելոյթին մէջ:

«Յաջորդ տարուան 9 Դեկտեմբերը, Յիշատակման միջազգային օրը, աւելի մեծ նշանակութիւն պիտի ունենայ, քանի որ անիկա կը համընկնի «Յեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգիլելու եւ պատժելու մասին» համաձայնագրի ընդունման 70-ամեակին հետ: Այս առիթով, Հայաստան կը պատրաստուի Երեւանի մէջ հիւրընկալելու «Յեղասպանութեան Յանցագործութեան Դէմ» 3-րդ համաշխարհային նիստը: Համաձայնագրի ընդունումէն 70 տարի անց ալ աշխարհը գերծ չէ այս «նոյրկալի արհաւիրքէն»: Չափազանց կարեւոր է կրկնապատկել կանխարգիլման օրակարգի ամրապնդման ուղղուած միջազգային ջանքերը: Այն, ինչին ականատես կ'ըլլանք այսօր, մասնաւորապէս Մերձաւոր Արեւելքի մէջ, ցեղային եւ կրօնական խումբերու դէմ ինքնութեամբ պայմանաւորուած յանցագործութիւններու հետ կապուած, բացայայտօրէն կը վկայէ համաձայնագրի արդիականութիւնը, որ յստակ սահմանած է պատժելի գործողութիւնները, ներառեալ յանցակցութիւնը», ըսած է էտուարտ Նալպանտեան:

Նախարարին խօսքով՝ Հայաստան այն առաջին պետութիւններէն էր, որ բարձրաձայնեց այդ խնդիրին մասին, կոչ ընելով ամրապնդելու

կանխարգիլման միջազգային կառուցակազմերը: Քրիստոնեաներու եւ կրօնական այլ խումբերու դէմ ատելութեան հողի վրայ իրականացուող յանցագործութիւններուն եւ խտրականութեան հակազդելու արդիւնաւէտ միջոցներու յետագայ զարգացումը եղած է վերջերս ԵԱՀԿ-ի նախագահութեան ու Ժողովրդավարական հաստատութիւններու եւ Մարդու իրաւունքներու գրասենեակի կազմակերպումով եւ Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան աջակցութեամբ Երեւանի մէջ կայացած բարձրաստիճան համաժողովի ուղարկութեան կեդրոնին:

«Բռնութիւնները Մերձաւոր Արեւելքի մէջ չեն շրջանցած հայերը, որոնք դարձել շարունակ մաս կը կազմեն Սուրիոյ եւ միջերկրեածովեան տարածաշրջանի բազմամշակութային եւ բազմակրօն խճանկարին: Աւերուած են հայկական բնակավայրեր, եկեղեցիներ, դպրոցներ եւ մշակութային հաստատութիւններ: Մեր հայրենակիցներէն շատերը զոհուած են անհաբեկական գործողութիւններու իբրեւ արդիւնք, իսկ ոմանք ստիպուած ձգած են իրենց բնակութեան վայրերը: Միայն Սուրիոյն աւելի քան 22 հազար փախստականներ ապաստան գտած են Հայաստանի մէջ՝ մեր երկիրը դարձնելով բնակչութեան թիւի յարաբերակցութեամբ երրորդը Եւրոպայի մէջ՝ Սուրիոյն փախստականներ ընդունող երկիրներու շարքին: Մարդասիրական օգնութեան շարունակական տրամադրումով՝ փորձած ենք նաեւ աջակցիլ անոնց, որոնք օգնութեան կարիք ունին Սուրիոյ մէջ», աւելցուցած է նախարարը:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՅ**  
ՓԱՍՍԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ)  
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ  
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝  
ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

[www.massisweekly.com](http://www.massisweekly.com)  
Updated every Frida

### ՋԱՐՄԱՆԱԶԱՆ 2018 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍԱԾ ԵՆ



«Ջարմանազան» արեւմտահայերէնով ամառնային նորարար ծրագիրը 2018-ին տեղի պիտի ունենայ Ֆրանսայի Ալպեան լեռներու շրջանը, Յուլիս 15-էն մինչեւ Օգոստոս 9: Բաղկացած պիտի ըլլայ միեւնոյն ժամանակ երեք նախաձեռնութիւններէ .

• 10-էն 15 տարեկան պատանիներու համար նախատեսուած ճամբար մը,

• խտացեալ համալսարանական ծրագիր մը, ուղղուած Սփիւռքի արեւմտահայերէնի ուսուցիչներուն, ու վաւերացուած Փարիզի Արեւելեան լեզու - ներու եւ քաղաքակրթութիւններու ազգային հիմնակ ին (Ինալքոյին) կողմէ,

• 16-էն 24 տարեկան երիտասարդներու համար նախատեսուած ստեղծագործական յայտագիր մը, որ պիտի սկսի Յուլիս 12-ին եւ պիտի տեւէ մինչեւ Օգոստոս 9 :

Պատանիները եւ երիտասարդները իրենց տարիքին համաձայն գանազան աշխատանոցներու պիտի մասնակցին, ինչպէս՝ երաժշտական, թատերական եւ պարային աշխատանոցներ, զեղարուեստի, ազատ գրութեան եւ գրական ընթերցումներու նուիրուած նիստեր, բանավեճեր եւ բազմազան խաղեր ու մարզանքներ:

Բոլոր նիստերուն ու աշխատանոցներուն ընթացքին՝ չարաբերութեան եւ հաղորդակցութեան լեզուն պիտի ըլլայ արեւմտահայերէնը, մասնագէտ ու տաղանդաւոր ուղեկիցներու ղեկավարութեամբ:

«Ջարմանազան»ը բացէ Սփիւռքի պատանիներուն եւ երիտասարդներուն: Տրամադրելի տեղերու թիւը սահմանափակ է. 10-էն 15 տարեկան մասնակիցներու պարագային՝ 40, 16-էն 24 տարեկան մասնակիցներուն համար՝ 30 հոգի:

Նկատի պէտք է ունենալ նաեւ հետեւեալ պարագան. երիտասարդներու խումբին մասնակիցները անհրաժեշտ է որ գիտնան առնուազն միջին մակարդակով հայերէն մը:

Իսկ համալսարանական խտացեալ ծրագիրը, զոր պիտի վարեն մասնագէտ դասատուներ, 15 ուսուցիչ միացն կ'ընդունի: Ծրագիրը կ'առաջարկէ մանկավարժական այժմէական մօտեցումներու եւ առարկաներու վրայ հիմնուած դասախօսութիւններ եւ խմբային աշխատանքներ:

Արձանագրութեան եւ յաւելեալ տեղեկութիւններու համար այցելեցէ՛ք <http://www.zarmanazan.com> կայքէջը:

Արձանագրութիւնները պէտք է կատարուած ըլլան մինչեւ 22 Յունուար 2018, կրիտիկի ժամով ժամը 23 : 00-ը :

Բոլոր արձանագրողներուն հետ կապ պիտի հաստատենք մինչեւ 30 Յունուար 2018-ը:

Անցեալ տարուան ճամբարին մասին զաղափար կազմելու համար դիտեցէ՛ք 2017 Zarmanazan video տեսերիզը, հետեւեալ հասցէին վրայ. [www.gulbenkian.pt/armenian-communities](http://www.gulbenkian.pt/armenian-communities)

«Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան Հայկական բաժանմունքը 2017-ին ձեռնարկեց «Ջարմանազան» մանկավարժական յայտագիրին, որպէս արեւմտահայերէնի վերաշխուժացման ծրագրի մէկ բաժինը: Ան կազմակերպուած է Լիոնի Mille et un mondes ընկերակցութեան եւ Փարիզի Արեւելեան լեզուներու եւ քաղաքակրթութիւններու Ազգային Հիմնարկին համագործակցութեամբ: «Ջարմանազան» ճամբարը վաւերացուած է Ֆրանսայի երիտասարդութեան եւ մարզանքներուն նախարարութեան կողմէ:

### ՋՈՒԹԱԿԻ ՄԵԾ ՎԱՐՊԵՏ ՍԵՐԿԷՅ ԽԱՉԱՏՐԵԱՆ

#### ԱՆԻ ԹՈՐԱՆԵԱՆ



Այսօր արդէն աշխարհահռչակ դարձած հայ ջութակար Սերկէյ Խաչատրեան ծնած է Երեւան, 5 Ապրիլ 1985-ին, երաժիշտ-դաշնակահարներու ընտանիքի մէջ: 1993-էն ի վեր կը բնակի Գերմանիա: 2012 թուականէն անոր տրուած է Հայաստանի Հանրապետութեան վաստակաւոր արթիսթ կոչումը: Ջութակ նուագել սկսած է վեց տարեկանին՝ փրոֆեսօր Պետրոս Հայկազեանի ղեկավարութեամբ: Եղած է Երեւանի Սայաթ-Նովայի անուան երաժշտական դպրոցի սան: Յետագային երաժշտական ուսումը շարունակած է Փրոֆ. Ժիւլիանի ղեկավարութեամբ՝ Վուրցպուրկ քաղաքը, իսկ 1996-էն՝ Քարլսրուէի երաժշտական բարձրագոյն դպրոցին մէջ աշակերտած է հռչակաւոր Եոզէֆ Բիսինին:

9 տարեկանին Խաչատրեան առաջին անգամ հանդէս եկած է սիմֆոնիք նուագախումբի հետ որպէս մենակատար:

Փոքր տարիքէն մենահամերգներով եւ որպէս մենակատար՝ սիմֆոնիք նուագախումբերու հետ հանդէս եկած է աշխարհի շուրջ 50 երկիրներու մէջ, որոնց շարքին, որպէս կանոն, տարին մէկ-երկու համերգով հանդէս եկած է նաեւ Հայաստանի մէջ: Ան պարբերաբար կը մասնակցի Կերտարձի Փառասովին, ուր ելոյթներ կ'ունենայ նաեւ հայազգի այլ երաժիշտներու հետ:

Սերկէյ Խաչատրեան 2013-ին ստացած է գուրցերիական Credit Swiss դրամատան ամէնամեայ մրցանակը՝ որպէս «Աշխարհի լաւագոյն երիտասարդ երաժիշտ»:

15 տարեկանին ան կը դառնայ Հելսինքիի Սիպելիուսի անուան մրցոյթի ամենաերիտասարդ մասնակիցն ու յաղթողը, նաեւ արժանանալով «քոնսերտի լաւագոյն կատարում» մրցանակին:

Սերկէյ դափնեկիր է նաեւ Ֆրից Քրեյսլերի եւ Ինտիմապոլիսի նաեւ այլ միջազգային մրցոյթներու: 2005-ին, յաղթող ճանչցուելով Պեյճի քաջի էլիզապէթ թագուհիի անուան դժուար մրցոյթին, անոր կը շնորհուի Սթրատիվարիուսի 1704 թուականին պատրաստուած «Հագիլնա» ջութակը նուագելու չորս տարուան իրաւունք:

Այժմ ան կը նուագէ Կոլարների 1740 թուականին պատրաստած «Իզալի» ջութակով, որով նուագած են իզաակ Սթեյնի եւ Էթէն Իզալի պէս ջութակահարներ:

Սերկէյ ելոյթ ունեցած է Մեծն Բրիտանիոյ բոլոր խոշոր նուագախումբերուն հետ, ներառեալ՝ Պրիմինկհամեան սիմֆոնիքը, BBC ֆիլհարմոնիքը, մշտական համագործակցութեան մէջ ըլլալով Ֆիլհարմոնիա նուագախումբերուն

հետ, ինչպէս նաեւ Թոքիոյի NHK Symphony, Ֆրանսայի ազգային, Ֆրանքֆուրթի ռատիօ-սիմֆոնիք, Պալմոնուրի սիմֆոնիք, Լոնտոնի ֆիլհարմոնիք, Պամպերկի սիմֆոնիք, Միւնիխի ֆիլհարմոնիք, Շուէտի ռատիօ-սիմֆոնիք, Մարինեան թատրոնի նուագախումբերու, Պերլինի, Փարիզի, Սիեթլի, Նիւ Եորքի, Պոսթընի, Ֆիլատելֆիոյ սիմֆոնիք եւ այլ հեղինակաւոր նուագախումբերու հետ:

Հանդէս եկած է խմբավարներ Կոնսթանտ Ծուտամելի, Քուրթ Մագուրի, Ռուտոլֆ Պարշայի, Վալերի Կերկիւելի, Մայքըլ Թիլտոն Թոմասի, Ճուքա-Փեքքա Սարաստէի, Եուրի Տեմիրքանովի, Դանիէլ Հարտինկի, Հերպերթ Պլոմսթեատի, Ճոնաթան Նոթի, Ճեյմս Կաֆիկանի, Անդրիս Նելսոնսի, Սըր Չարլզ Մաքքերասի, Քրիստոֆ Ֆոն Տոհանի, Ռաֆայէլ Ֆրուսպէ տը Պորկոյի, Եուրա Վալչուհայի, Թուկան Սոխիւելի եւ այլոց հետ:

2013-2014 համերգաշրջանի ընթացքին նուագած է Պերկի քոնսերտ հռչակաւոր Դաւիթ ԱՖ.քհամի հետ:

Կարգ մը համերգներ տուած է Ռոթերտամի ֆիլհարմոնիք, Նիտերլանտներու ռատիոյի ֆիլհարմոնիք, Վիեննայի սիմֆոնիք եւ այլ նուագախումբերու հետ:

Սերկէյ յաճախ տուէթով հանդէս կու գայ քրոջ՝ տաղանդաւոր դաշնակահարուհի Լուսինէ Խաչատրեանի հետ:


Միասին ելոյթ ունեցած են Ամսթերտամի Քոնսերտկապուլի, Քար նըկի հոլի, Լոնտոնի Ուիկմոր հոլի, Մարինեան թատրոնի, Theatre des Champs Elysees-ի, Cite de la Musique-ի (Փարիզ), Auditori Nacional Madrid-ի, Palais des Beaux Arts-ի (Պրիւքսէլ), Լիւքսեմպուրկի ֆիլհարմոնիայի, Alice Tully Hall-ի մէջ (Նիւ Եորք) եւ այլուր:

Պրամսի բոլոր սոնատներու կատարումով հանդէս եկած են բազմաթիւ քաղաքներու մէջ: Սերկէյ ելոյթներ ունեցած է նաեւ Նարեկ Հախանգարեանի եւ Լուսինէ Խաչատրեանի հետ՝ թրիօ կազմով:

Սերկէյին ձայնակաւանակները կ'ամփոփեն Ֆրանքի եւ Շոսթաուիչի սոնատները ջութակի եւ դաշնամուրի համար, Սիպելիուսի եւ Արամ խաչատրեանի ջութակի քոնսերտները:

**ԱՄՈՒՍՆԱՅԵԱԼՔ**  
Պր. Մայքըլ Հոֆմըն ԸնդՕր. Գոհար Գրիգորեան  
Փաստինա 16 Դեկտեմբեր, 2017  
Մեր ջերմ շնորհակալութիւններն ու լաւագոյն բարեմաղթութիւնները ամուսնացեալ զոյգին ու իրենց ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արուսեակ Գրիգորեանին:

**ՎՐԻՊԱԿ**  
Մեր թերթի անցեալ շաբթուան (16 Դեկտ. էջ 8) «Հարմօնի» սենեկային նուագախումբի մասին գրուած յօդուածի վերջին պարբերութիւնը կարդալ հետեւեալ ձեւով.  
Արդարեւ հաճելի եւ օգտակար երեկոյթ մըն էր, որուն համար մեծապէս զնահատելի են նախաձեռնողները, ինչպէս նաեւ զեղարուեստական բաժնի ղեկավար՝ շնորհալի խմբավարուհի Թալին Գուլումեանը:

  
NATIONAL NOTARY ASSOCIATION  
NOTARY PUBLIC  
MEMBER  
**Garine Depoyan**  
626-755-4773  
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106  
ghdepoyan@gmail.com



### ԻՐԱԿԱՆ ՍԻՐՈՅ 10 ՆԱԽԱՆՇԱՆ

Առողջապահության Համաշխարհային կազմակերպությունը սերտորեն դասած է հոգեկան հիւանդութիւններու շարքին եւ, ինչպէս այլ հիւանդութիւնները, անիկա ունի իր նշանները՝ կաշուն միտքեր, անքնութիւն, տրամադրութեան կտրուկ փոփոխութիւն, անսպասելի քայլեր, գլխացաւ, ճնշումի տատանումներ: Իսկական սէրը դժուար է բացատրել, սակայն կարելի է թուարկել շարք մը ակնյայտ նախանշաններ:

1. Դուք ոչ մէկ կասկած ունիք. Երբ սէրը կը կրակէ, այդ կրակոցը կ'ըլլայ դիպուկ՝ գոհին տալով փրկուելու ոչ մէկ կարելիութիւն: Մենք կը սիրահարուինք անդառնալիօրէն եւ ոչ բարեկամները, ոչ հանգամանքները, ոչ տարածութիւնը կրնան խանգարել այդ զգացումին: Դուք յստակ կը հասկնաք եւ պարզ կը տեսնէք ձեր ապագան այդ մարդուն հետ՝ մէկ, հինգ, տասը տարի յետոյ ու կը պատկերացնէք զինք ամուսինի եւ ծնողի դերին մէջ:

2. Դուք չէք կրնար պատասխանել «ինչո՞ւ համար կը սիրեմ զինք» հարցին. Ոչ թէ որովհետեւ սիրելին կորսնցուցած էք գիտակցութիւնը, ամօթը եւ յիշողութիւնը, այլ որովհետեւ դուք չունիք ատոր պատասխանը: Դուք չէք սիրեր յստակ որեւէ բանի համար, այլ պարզապէս, որ ան կայ: Դուք կը զգաք, որ անձեր երկրորդ կէսն է:

3. Ուշադրութիւն չէք դարձնել ուրիշներուն. Դուք ամբողջութեամբ ձեր զգացումները կու տաք այդ մարդուն եւ բոլորովին անտարբեր էք մնացածներուն նկատմամբ:

4. Դուք ձեզ ապահով կը զգաք. Սիրած մարդու հետ բոլոր իրավիճակներու մէջ դուք ձեզ ապահով կը զգաք: Ան կը մտնէ ձեր յարմարաւէտութեան շրջանակին մէջ: Ձերմութիւնը եւ հոգեկան միասնութիւնը թոյլ կու տան ձեզի հանգիստ զգալու անոր կողքին:

5. Ձեր շարաբերութիւնները կը զարգանան. Երբեմն պէտք է ժամանակ, որպէսզի սէրը ձեւ ստանայ: Եթէ նախնական կիրքերը կը հանդարտին, իսկ քնքշանք եւ հոգատարութիւն նուիրելու ցանկութիւնը կը մեծնայ, ուրեմն ատիկա

նոյնինքն սէրն է:

6. Դուք կը դառնաք աւելի լաւ. Այս վառ զգացումով պատած մարդուն մօտ կը յառաջանայ անելու եւ զարգանալու ցանկութիւն, դուք կ'ուզէք դառնալ աւելի հետաքրքրական, աւելի գրաւիչ: Միաժամանակ, իրական սէրը ձեզմէ չի պահանջեր արմատական փոփոխութիւններ: Սիրոյ մէջ պէտք չէ ծանր աշխատանք ըլլայ, այլ՝ թեթեւ:

7. Կը սորվիք ներել. Հաւաքել նեղութիւնները՝ անօգուտ գործ է: Սիրող մարդիկ միշտ պատրաստ են ներել իրարու: Միշտ չէ, որ ատիկա դիւրութեամբ կը տրուի, երբեմն տարիներ կը պահանջուին: Նեղուածութեան զգացումը շատ զօրաւոր է եւ յաճախ սիրոյ զգացումին շատ մեծ մըրցակիցը կը դառնայ: Սակայն ամուր սէրը կրնայ յաղթել բոլոր նեղութիւններուն եւ բուժել հոգեկան վէրքերը:

8. Դուք մէկ խումբ էք. Դուք կը խաղաք ընդհանուր կանոններով, չէք բողոքել սիրած մարդու թերութիւններէն ուրիշներու մօտ եւ վստահ էք, որ ան նոյնպէս այդպէս կը վարուի:

9. Դուք կրնաք լուր իրարու հետ. Ուրախ ժամանակ անցնելը, հեռաձայնով անընդհատ խօսիլը միանշանակ իրարու հանդէպ հետաքրքրութեան նշան է: Այսպիսի գիշերային խօսակցութիւններէն կը սկսին սիրոյ տարբեր պատմութիւններ: Սակայն երբեմն լուրթիւնը աւելի մեծ նշանակութիւն ունի: Եթէ լուրթիւնը ձեր միջեւ չի դառնար անշարժար ընդմիջում, կը սկսի երկու հոգիներու լուր երկխօսութիւնը:

10. Մեր զգացումները կրնան յաւերժ չըլլալ. Սիրահարներու մէջ գոյութիւն ունի սխալ կարծիք, որ իրական սէրը կեանքի մէջ կը պատահի մէկ անգամ: Եթէ սիրած ես, ուրեմն երբեք չես դադարի, իսկ եթէ կորսնցուցած ես, ուրեմն այլ լեւա նոյնը չես զգար:

Սակայն կեանքի մէջ ամէն ինչ կը փոխուի: Մէրը նոյնն է, ինչպէս հեծիկ քշել սորվելը՝ եթէ մէկ անգամ սորվեցար, չես մոռնար: Յաւալի անկումէ յետոյ, կարելի է կանգնիլ, շարունակել ընթանալ դէպի նոր սէր:

### 3 ՈՒՏԵԼԻՔՆԵՐ, ՈՐՈՆՔ Կ'ԱՄՐԱՑՆԵՆ ՈՍԿՈՐՆԵՐԸ ՈՒ ԿԸ ԿԱՆԽԱՐԳԻԼԵՆ ՈՍԿՐԱՅԻՆ ՅԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ոսկորներուն ամբողջութիւնը պահպանելու եւ ոսկրային համակարգի հիւանդութիւններէ խուսափելու համար կան բազմաթիւ նաեւ դեղորայքային միջոցներ, որոնք ոչ այնքան կը կանխարգիլեն, որքան կը բուժեն արդէն եղած խնդիրները: Այժմ գիտնականները կատարած են հետազոտութիւն՝ հասկնալու համար, թէ որ ուտելիքները կը նպաստեն ոսկորներու ամբողջութեան:

Ուսումնասիրութեան համաձայն, ամուր ոսկրային համակարգ ունենալու համար անհրաժեշտ է կանուխ տարիքէն ճիշդ սնուիլ, առողջ ու աշխոյժ ապրելակերպ վարել: Ուսումնասիրութիւնը պարզած է. ոսկորներու՝ ճիշդ զարգացման եւ աճի համար անհրաժեշտ է աննդակարգին մէջ ընդգրկել հետեւեւէլ երեք ուտելիքները.

Պրոքրիլ. Այս բանջարեղէնը, բացի իր հակաքաղցկեղային յատկութիւններէն նաեւ ունի ոսկորները

ըն ամրացնելու իւրապատկութիւն: Անիկա կը պարունակէ մեծ քանակութեամբ հանքանիւթեր, մասնաւորապէս քալսիում, որ ամենանահրաժեշտ տարրերէն է ամուր ոսկորներ ձեւաւորելու համար:

Պանան. Պանանը հարուստ է ֆոսֆորով, մանկանէզով եւ մակնէ-իգուլով, որոնք շատ արդիւնաւէտ են ոսկրային հիւանդութիւններու, մասնաւորապէս օսթոփոքոզի պարագային:

Պանանին մէջ եղող վիթամ-միները նոյնպէս կը նպաստեն ոսկորներու ամբողջութեան:

Շուշմա. Այս համեմունքը նոյնպէս կը պարունակէ մեծ քանակութեամբ մակնէզիում, մանկանէզ եւ քալսիում: Անիկա յատկապէս օգտակար է քալսիումի պակաս ունեցողներուն համար: Շուշմայի ձէթը հիւանդի փոխարինող է ձիթապտուղի ձէթին, անիկա կարեւոր է օսթոփոքոզի պարագային՝ խոչընդոտելով հիւանդութեան զարգացումը:

### 10 ԽՈՐՈՒՐԴ ԻՆՉՊԵՍ ՄԱՐԴԸ ՏՐԱՄԱԴՐԵԼ ԴԵՊԻ ՁԵՁ

Եթէ ձեզի համար դժուար է մարդոց հետ լեզու գտնել կամ, եթէ կ'ուզէք, որ ձեր վրայ ուշադրութիւն դարձնեն, ուրեմն հետեւեցէք նշուած խորհուրդներուն:

1. Երբ մարդը կը ծիծաղի, ան բնագրաբար կը նայի ընկերոջ ուղղութեամբ՝ աջակցութիւն փնտռելով: Եթէ հետեւիք մարդոց ինչպէս կը պահեն իրենք զիրենք շրջապատի մէջ, պիտի հասկնաք, թէ ով՝ որուն ընկերն է:

2. Մարդու հետ շփուելու ընթացքին նայեցէք անոր կօշիկներուն, եթէ կօշկածայրերը ուղիղ ձեր ուղղութեամբ են, ուրեմն ան ձեր կողքին ինքզինք յարմարաւէտ կը զգայ, եթէ ոչ, ուրեմն՝ ոչ:

3. Առաջին ժամադրութեան ժամանակ հրաւիրեցէք յիշուող եւ հետքըրական վայր: Այնուհետեւ անոր համար այդ վայրը միշտ ձեզ պիտի յիշեցնէ:

4. Երբ առաջին անգամ կը հանդիպիք մէկուն, աշխատեցէք յիշել անոր աչքերուն գոյնը: Ատոր համար դուք պէտք է երկար նայիք անոր աչքերուն, որ եւ վստահելի շարաբերութիւններու գրաւականն է սկիզբէն իսկ:

5. Եթէ ձեր աշխատանքը յաճախորդներու սպասարկելն է, ձեր ետեւը դրէք հացելի մը, որ շարքի

կանգնած մարդոց թոյլ պիտի տայ աւելի քիչ ձանձրանալ եւ բարկանալ:

6. Եթէ դուք կը զգաք, որ ոեւէ մէկը կ'ուզէ վատ բան ըսել ձեր մասին ուրիշներու ներկայութեան, փորձեցէք մօտենալ այդ մարդուն, ատիկա պիտի նուազեցնէ անոր ինքնավստահութիւնը, եւ ան կ'ամ ձայն պիտի չհանէ, կ'ամ պիտի ըսէ իր ըսելիքը, բայց աւելի մեղմ:

7. Կը հանդիպիք մէկուն եւ կը փափաքիք հաճելի թուիլ, ուստի աւելի վառ ձեւով արտայայտեցէք ձեր ուրախութիւնը: Ան նոյն կերպով ուրախ պիտի ըլլայ ձեզ յաջորդ անգամ տեսնելուն:

8. Աշխատանքային հարցազրոյցի ժամանակ պատկերացէք, որ հարցազրոյց ընողը ձեր ընկերն է, ատիկա ձեզի ինքնավստահութիւն պիտի հաղորդէ:

9. Եթէ դուք մէկը առաջին անգամ կը տեսնէք՝ մի օգտագործէք «ես կը կարծեմ», «ես կը մտածեմ» արտայայտութիւնները: Այդպիսով դուք անոր մօտ կը ձգէք ցած ինքնագնահատական ունեցող մարդու տպաւորութիւն:

10. Ծիծաղը երջանիկ կը դարձնէ մարդը: Որքան շատ ծիծաղիք, այդքան շատ յաջողութեան հասնելու կարելիութիւն պիտի ունենաք:

### ԽՕՍՔԸ Կ'ԱՐՏԱՅԱՅՏԵ ԶԵՐ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Մենք քիչ ուշադրութիւն կը դարձնենք, թէ ինչ ձայներանգով կը խօսինք, ինչ բառեր կ'արտասանենք: Օգտագործելով վիրաւորական ու պարզապէս շատ «աղոտոտ» բառեր՝ մենք կարծես մոռցած ենք, թէ ինչ բան է բարեկիրթ ու գեղեցիկ խօսքը: Բայց ատիկա միայն մեր անգրագիտութեան ու գիտակցութեան յետընթացի վկայութիւնը չէ: Միթէ՞ պարզ չէ, որ երբ մենք կոպիտ ու կեղտոտ բառեր կ'ըսենք, մեր հոգիին մէջ հանգիստն ու երջանկութիւնը չեն աւելնար: Լրիւ հակառակը: Մենք հնարաւորութիւն կու տանք, որ մեր հոգիին մէջ բացասական ուժ յառաջանայ, իսկ յետոյ կը զարմանանք, թէ ինչու այդքան յաճախ ստիպուած կ'ըլլանք գլխացաւի դեղեր խմել:

Մինչդեռ գիտակցութեան ու խօսքի միջեւ կայ ուղիղ կապ: Եթէ գիտակցութիւնը առողջ է, խօսքն ալ արժանի կ'ըլլայ: Առողջ գիտակցութիւնը միշտ դրանալ է: Ունենալով նման գիտակցութիւն՝ մենք չենք խօսիլ միւսներու թերութիւններուն մասին, չենք քննադատեր, պահանջներ չենք ներկայացներ: Ծակատագիրին մասին չենք բողոքեր: Մեր խօսքը հանգիստ ու բարեացակամ կ'ըլլայ: Նման զրուցակիցի հետ բնականաբար բոլորը հաճոյքով կը շփուին: Իսկ բարկացած խօսիլը հոգիի թուլութեան նշան է:

Ըստ վիճակագրութեան՝ բոլոր վէճերու 90 տոկոսին պատճառը այն է, որ մենք ոեւէ մէկուն մասին վատ բաներ կը խօսինք: Մենք պէտք է սորվինք խօսիլ հաճելի, բարեկիրթ ձեւով՝ վերահսկելով մեր խօսքը:

Նկատուած են, որ մենք ձեռք

կը բերենք այն մարդու յատկանիշները, որուն մասին կը մտածենք կամ կը խօսինք, ատոր համար ալ եթէ ոեւէ մէկուն մասին վատ կը խօսինք, մենք այդ մարդու բացասական յատկանիշները մեզի ալ կը վերագրենք:

Եթէ կը գովենք՝ մենք կը ստանանք տուեալ մարդուն բնորոշ դրական յատկանիշները: Նկատենք, որ որքան եսասէր, նախանձող ու անբարեացակամ ենք մենք, այդքան մեզի համար դժուար է ոեւէ մէկուն մասին ջերմ խօսիլ: Որքան կոպիտ է մեր խօսքը, այդքան աւելի աններդաշնակ ենք մենք, ատոր համար ալ կեանքէն աւելի դաժան դասեր կը ստանանք: Մեր շատ յոգնելու ու քիչ գործ կատարելու պատճառներէն մէկը շատ խօսիլն է: Շատախօսութիւնը դատարկախօսութեան նշան է: Պէտք է խօսիլ քիչ, հանգիստ, համբերատար ու բարեկիրթ: Այդպէս կարելի է եւ ժամանակ տնտեսել, եւ ուժեր:

Կարեւոր է սորվիլ վերահսկել խօսքը: Խօսքերը պէտք է իմաստ ունենան, ուժեղ են միայն նման խօսքերը:

Բառերը իմաստ ունին, եթէ անոնք նրբանկատ են ու միւսներու հանդէպ լեցուած են սիրով: Ամէն ինչի մասին պէտք է ձիշդը ըսել, բայց՝ սիրով: Ինչ բառերով ալ, որ մայրը ստիպէ գաւակներուն ընել այս կամ այն բանը, անոր խօսքերը կոպիտ չեն թուիր, քանի որ անոնց մէջ կը զգացուի մայրական սէրը՝ մայրը կը սիրէ մեզ, ան միայն բարիք կ'ուզէ մեզի համար: Եւ ձիշդ այդպէս ալ՝ որքան որ մենք դիպուկ ու կտրուկ չարտայայտուինք, մարդիկ չեն նեղանար մեզմէ, եթէ մենք գլխաւորապէս ըլլանք:

«ՅԱԾԸՆԸ ՍԻՐՈՒՆ»

Շարունակուած էջ 14-էն

յախուռն վրիժառական գործո ղու թիւններով սարսափ կը տարածէ թրքական շրջանակներու մօտ:

«Հնչակեանները, գիտակցելով Հաճընի մէջ ունեցած իրենց ճնշիչ մեծամասնութեան, արդէն իրենք եւ իրենց համակիրները գրաւեր էին քաղաքին կարեւոր պաշտօնները եւ կը յաւակնէին տնօրինել քաղաքացիական եւ կառավարական բոլոր գործերը» (էջ 142): Կուսակցութեան ատենապետն էր Յովակ Վարժապետ, ատենադիրը՝ Ռուբէն Երկաթ (Տեմիրեան): Ազգային Միութեան ատենապետ կ'ընտրուի հնչակեան Աւետիս Չաւարեան, իսկ աւելի ուշ քայմաքամ (հաճընցի կ'ըսեն՝ «Տեղակալ») կ'ընտրուի Ատանա բնակող, հնչակեան փաստաբան, հաճընցի Կարապետ Չալեան, որ շուտով կը ստանձնէ իր պատասխանատու պաշտօնը: Զինուորական ուժերու վաշտապետ կը նշանակուի Մեսրոպ Շիրըրտըմեան: Հետագայ քրականօրէն նկարագրուած է անգլիացի եւ ֆրանսացի զինուորական բարձրաստիճան պատուիրակութեան մը այցը Հաճըն՝ տեղուցի վրայ հարցերը քննելու: Հայոց խանդավառ դիմաւորումը Զօրավար Մատնին, ֆրանսացի զննարկներու, Սիսի կառավարիչ Թայարտային պիտի աւարտէր խոր հիասթափութեամբ, երբ անոնց մեկնելէն ետք հասկնալի կը դառնար, որ Հաճըն պիտի չհովանաւորուի Դաշնակիցներու կողմէ: Ինչ հեզմանք, անոնք յաճախ կը յորդորեն հայ-թուրք համակցութեան եւ խաղաղ կեանքի կարեւորութիւնը: Ծայր կ'առնէ տագնապը: Ֆրանսացի բժիշկ մը հայուն կ'ըսէ. «Ահա հոս է ձեր պարզամտութիւնը: Միամիտ մի՛ ըլլաք. մի տարուիք ումանթիք զգացական հովերով: Մեր պետութիւնները առարկայապաշտ եւ շահամոլ են եւ կը շարժին միայն ու միայն շահի ակնկալութեամբ» (էջ 160):

Սակայն, յուսադրուած հաճընցիք հետզհետէ կը զգան չէթէական զինեալներու եւ շրջակայ թուրք զիւղերուն մէջ քեմալական զինուորներու բազմացումը եւ կը նախզգան ինքնապաշտպանութեան հրամայականը: Մինչ այդ, Հաճըն կը ժամանէ Զօրավար Անդրանիկի բարձրաստիճան սպաններէն, հմուտ զինուորական Սարգիս ձէպէճեան: Ըստ լուրերուն՝ «Անդրանիկ փաշային հրահանգով պիտի ըլլայ: Ծրագրած են Կիլիկիոյ մէջ, կազմալուծուած Հայկական Լեզնոնին տեղ, իսկական հայկական բա-

նակ մը ստեղծել հայկական հրամանատարութեամբ» (էջ 184): Նկատի առնելով կացութեան լրջութիւնը, պատուիրակութիւն մը Պետրոս Սրբազանի գլխաւորութեամբ կ'ուղարկուի Ատանա, որ ոչ միայն օգնութիւն կը հայցէ, այլ կ'ըլլայ մնայուն ներկայացուցչութիւն յաջս պատկան մարմիններու:

Ի տես Հաճըն պաշարման սեղմումին եւ արտաքին օգնութեան չնչին յոյսերուն, քաղաքին ղեկավարութիւնը կը գտնուի երկընտրանքի առջեւ՝ կամ պարպել աւանը կամ մնալով կառչած հողին՝ պատրաստուիլ անխուսափելիին՝ ինքնապաշտպանութեան՝ մինչեւ արեան վերջին կաթիլը: Երկրորդ տեսակէտը կ'ըլլայ տիրական, որ միւս կողմին կը մեղադրէ դասալքութեան մէջ: Ուրեմն՝ խօսքը կը մնայ զինուորական ուժի ձեռքին՝ ձէպէճեան-Արամ Կայծակ-Մեսրոպ Շիրըրտըմեան երրորդութեամբ մարմնաւորուած: Ընդհանուր հրամանատարն է Ս. ձէպէճեան, որ կը յայտարարէ. «Կարգապահութիւնն ու պայքարելու ձեր ոգին ու կամքը հիանալի է եւ ալրպիսին պէտք է որ ըլլայ, քանզի անվերապահօրէն պէտք է ընդունինք, որ ճգնաժամն է մեզ դիմակալողը» (էջ 218): Կը կազմուի ինքնապաշտպանութեան գերագոյն ղեկավարութիւն՝ ռազմական, պարէնաւորման, առողջապահական, հաղորդակցութեան, կարգապահութեան մարմիններով, որուն կը ներգրաւուի ողջ ժողովուրդը՝ 600 մարտիկներու կողքին, որոնք գէն ի ձեռին կը հսկեն Հաճըն դարպասներուն: Կարիքը կայ գէնքզինամթերքի, կը պակսի կենսասնունդը. կապը կտրուած է Ատանայի հետ, բացի մի քանի սուրհանդակներէ: Ոստիկանութեան պետ կը նշանակուի սսեցի յիսնապետ Կարապետ Լաչինեան: Մարտ ամսուն ձիւնածածկ է շրջանը, մեկուսացած է քաղաքը:

Տարբեր է մթնոլորտը Ատանայի: Օգոստոսին Աբգարեան վարժարանին մէջ տեղի կ'ունենայ ժողովրդային հաւաք Սահակ Վեհափառի, Պետրոս Սրբազանի ներկայութեամբ, ուր կառավարիչ Միհրան Տամատեան կը յայտարարէ Կիլիկիոյ անկախութիւնը, որ շուտով կը խեղդուի Ատանայի ֆրանսացի կառավարիչ, զննարկող Պրեմոնի զինուորներուն կողմէ: Հեղինակը կը գրէ. «Բայց այդ օրերուն, մեր Ատանան, տակաւին անտեղեկ իր գալիք ճակատագրին, իր Սիհուն գետի ջուրերուն պսպղումով շրջացած, արեւին տակ կ'օրորուէր ան-

կախութեան քնաբեր երազներով» (էջ 245): Հոն է նաեւ ուսուցիչ Բենիամին ժամկոչեան:

Այնուհետեւ, իրադարձութիւնները կը ստանան զահալէժ ընթացք. Հաճըն օգնութեան փութացող ուժեր Սիսի մէջ եւ մեծաթիւ կամաւորներ Ատանայի մէջ զինաթափ կ'ըլլան ֆրանսական նենգ քաղաքականութեան պատճառով: Շատեր կը ձերբակալուին ու կը հայածուին նոյնիսկ: Տամատեան հեռագիրով կը յուսադրէ, բայց Թայարտայ խստիւ կ'արգիլէ որեւէ կապաքցանուած եւ սովահար Հաճընի բնակչութեան հետ: Հասած է օրհասական պահը եւ ձէպէճեան կ'ըսէ. «Երբ հայրենիքը վտանգի տակ է, բոլորս անխտիր զինուորներ ենք, մանուկ, կին, երիտասարդ ու տարեց՝ ամէնքս զինուորներ ենք իւրապատուկ պարտականութիւններով» (էջ 295): Ապա՝ ան «Նախ գորաշարժի ենթարկեց տասնըութէն մինչեւ վաթսուն տարեկան այր մարդիկը: Անոնցմէ ընտրելով 600 հոգի, կազմեց չորս վաշտեր, պաշտպանելու կոչուած՝ Հաճընը իր չորս կողմերէն» (էջ 308): Քաղաքը կ'ապրի մահու կենաց պահեր. «Հեռագիրներ՝ հրամանատար Թայարտային, Կիլիկիոյ ֆրանսական նահանգապետ զննարկող Պրեմոնին եւ Հաճըն մնայուն պաշտօնական ներկայացուցիչ Սրբազան Սարաճեանին զրուեցան եւ զրկուեցան: Երեքին ալ բովանդակութիւնը ահազանգն էր եւ օգնութիւն, օգնութիւն» (էջ 327): Իսկ Ատանայի մէջ՝ «Հազիւ ծնած, վերջ կը դրուէր մեր կիլիկեան երազին: «Ասպետական» Ֆրանսան ոտնահարելով իր նախապէս տուած մեղրածոր խոստումները, կռնակ կը դարձնէր մեր ժողովուրդի արդար դատին: Բոլորովին հակադարձ հաշուարկուածներ հետապնդելով, ինք ալ, իր դաշնակից Անգլիոյ նման լծուած էր Քեմալին ոտնամանը լիզելու արշաւին» (էջ 350): Օղանաւ մըն ալ կ'երեւի Հաճըն վերեւ, որ ժամանակաւոր եռանդ կը պատճառէ շրջափակեալ հայոց:

Վերջին գլուխը անկումն է քաղաքին իր ողջ դժխեմութեամբ եւ քստմնելի պատկերներով: Քեմալական զօրքը կը զնդակոծէ քաղաքը. կռիւներու թէժ պահուն կը վիրաւորուի հրամանատար ձէպէճեան եւ կը գամուի անկողինին: Իր պաշտօնը

կը ստանձնէ Արամ Կայծակ, որ միշտ թաքուն հակասութեան մէջ է Մեսրոպ Շիրըրտըմեանի հետ: Թուրքեր կը բերեն թնդանօթ, որ կը սկսի աւերել աւանը: Սովը համատարած է. մարդիկ կորկոտ ու ձաւար չունին. ձիւն միսէ կը սարքեն ճիտապարհ. կը փորձեն սնանիլ անհաւատալի միջոցներով: Ա. Կայծակ կը յաջողի գրաւել թնդանօթը, սակայն ոսոխը կը բերէ նորը: Հերոս եւ փոր ձառու ղեկավար ձէպէճեան անձնասպան կ'ըլլայ սուգի մատ նելով ազգը համայն: Կը նահատակուի Տեղակալ Կ. Չալեան: Աստիճանաբար փուլ կու գան դիրքերը եւ կը հրկիզուի քաղաքը: Խելակորոյս ժողովուրդը կ'ապաստանի եկեղեցի ու հաստատութիւններ, ուր հրացանագար կ'ըլլան քաղաքը գրաւող թուրք խուժանին կողմէ: Շատեր կը դիմեն ինքնասպանութեան: Մոխիր ու աւեր է չորսիդին: Կը խողխողուին բեկորները հայոց: Սրտակեղեք է Հաճըն Վերոսամարտին մայրամուտը՝ մէկը մեր ողբերգական էջերէն: 6000 հայ յորդիներէն 420-ը հարաւային կիրճէն անցնելով կը կարողանան փրկուիլ եւ խլեակներով հագիւ հասնիլ Սիս ու ապա Ատանայ: 15 Հոկտեմբեր 1920-ին կ'իջնայ «Հաճըն սիրուն»: Հատորին կ'իջնի պարբերութիւնը՝ «Բայց ո՛վ զարմանք, դար մը ամբողջ, ազգովին յամառեցանք երգել ու դեռ պիտի երգենք, թէ՛ «Միայն ապրեցաւ ՀԱԾԸՆԸ ՍԻՐՈՒՆ...»» (էջ 426):

Օգոստոս է նաեւ Հաճըն բարբառէն: Գիրքը լոյս տեսած է հովանաւորութեամբ Գեր. Յովնան Արք. Տէրտէրեանի (Առաջնորդ Հիւսիսային ԱՄՆ-ի Արեւմտեան թեմին) եւ մեկնաստեղծութեամբ տէր եւ տիկին Վիգէն եւ Մարալ Գրաճեաններու: Հեղինակին նախկին գործերէն յիշենք՝ «Մատանիներ» (1969), «Արմատներ» (1981), «Նայիրեան Մորմոք» (1982), «Աշոտ Ողոր մած» (1991), «Տագնապը» (2000), «Արշիլ Կորքի» (2004), «Գրա կան Համաստեղութիւն» (2008), «Ծաղկաքաղ» (2017), «Շուրջը՝ Ոչինչ» (Թարգմանութիւն Շահան Շահնուրի բանաստեղծութիւններուն) (2010): Ան 2008-ին արժանացած է Սբ. Սահակ-Մեսրոպ շքանշանին (Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան) եւ վերջերս ալ Հայաստանի Հանրապետութեան սփիւռքի նախարարութեան «Ուրիշըմ Սարոյեան» շքանշանին:


**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
\$ 125,00 (Air Mail) for Canada.  
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:-----  
Country: -----  
Tel:----- Email:-----

**VA Print Media**  
Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ  
Հին Գիրքերու Նորոգութեան Համար  
Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



**Vahe Atchabahian**  
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924  
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

### Էրդողանը Ֆանկանում է

Շարունակում է 6-էճ

կար մի սեւեռուն գաղափար. ով կը կարողանայ նուաճել այն ժամանակակալ քրիստոնեաների մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը, նա կը կատարի Ալլահի կամքը: Արաբներին դա չյաջողուեց, սակայն օսմանցիներն իրականացրին այդ դարաւոր իդձը, իսկ 1516-ի օգոստոսի 29-ին մուսուլմանների գլխաւոր սրբավայրերը՝ Մեքքան եւ Մեդինան գրաւելուց յետոյ, Սելիմ I-ը իրեն հռչակեց «երկու սուրբ քաղաքների ծառայող» եւ դարձաւ առաջին օսմանցի սուլթանը: Հետագայում՝ 1924-ին, Քեմալ Աթաթուրքը լուծարեց խալիֆայիտը:

Հետեւելով էրդողանի ելույթների վերոնշեալ մէջբերումներին՝ յստակ է դառնում նրա կոչերի տրամաբանութիւնը: Էրդողանը խաղում է մուսուլմանների կրօնական զգացմունքների վրայ եւ իսլամական կամ գոնէ սունիական քաղաքակրթութեան առաջնորդի դերը ստանձնելու յայտ է ներկայացնում: Եթէ 15-րդ դարում խալիֆայի կենտրոն դառնալու համար անհրաժեշտ էր գրաւել Կոստանդնուպոլիսը, ապա հիմա այդ դերը կարող է կատարել Երուսաղէմը: Ով լուծեց Իսրայէլի «խնդիրը», նա էլ կը դառնայ իսլամական աշխարհի առաջնորդը ու իսլամական քաղաքակրթութեան առանցքային երկիրը: Պատահական չի Երուսաղէմը ազատագրելու մասին էրդողանի հռետորաբանութիւնը, որը դիմում է կրօնական մարգարէութիւններին ու իսլամական խորհրդանշաններին:

Պարզ է, որ, փակելով ԵՄ անդամ դառնալու յաւակնութիւն-

ների էջը, հարցականի տակ դնելով ՆԱՏՕ-ի անդամութիւնը, ունենալով քրդական անլուծելի խնդիրը, որը սպառնում է Թուրքիայի ամբողջականութեանը, էրդողանը փորձում է օգտագործել իր վերջին շանսը, որը համահունչ է բազմաթիւ մուսուլմանների իդձերին: Պէտք էի նաեւ անտեսել ԱՄՆ-ում սկսուած՝ Թուրքիայում յայտնի կոռուպցիոն սկանդալի հերոս Ռեզա Ջարրաբի դատավարութիւնը, որի պատճառով էրդողանը Թուրքիայի հազարաւոր դատաւորներ եւ դատախազներ աշխատանքից հեռացրեց: Ջերբաբը, էրդողանի ընտանիքի անդամների հետ միասին փողերի լուսացումով եւ Իրանի նկատմամբ Արեւմուտքի կողմից յայտարարուած տնտեսական սանկցիաները շրջանցելով, ստուերային գործարքներով է զբաղուած եղել: Ջերբաբը սկսել է վկայութիւններ տալ, եւ էրդողանին անհրաժեշտ է դա ներկայացնել որպէս իր դէմ սկսուած հալածանքներ՝ իսլամական աշխարհը «փրկելու» իր ջանքերը խաթարելու համար:

Թուրքիայի նոր քաղաքականութիւնը անմիջականօրէն ազդելու է նաեւ Հարաւային Կովկասի իրավիճակի վրայ՝ ստիպելով Ատրպէյճանին կողմնորոշուել եղբայրական Թուրքիայի ու Իսրայէլի միջեւ: Ատրպէյճանի համար ճակատագրական է նաեւ աշխարհիկութեան եւ իսլամականութեան միջեւ կողմնորոշուելը, որը կարող է երկիրը երկու թշնամական՝ շիական ու սունիական ճամբարների բաժանել: Հիմնական զարգացումները դեռեւս առջեւում են:

«ՀԵՏՔ»

### Քարոզարշաւը Մեկնարկեց

Շարունակում է 7-էճ

Ֆոնն է ապահովել: Չեմ կարծում, թէ Կարապետեանն այդքան միամիտ է, որ չի հասկացել այդ ամէնը այն ժամանակ եւ հիմա:

- Ի՞նչ էք կարծում, արդեօք անցնուցում կ'իրականացուի Սերժ Սարգսեանի վարչապետութեան հարցը:

- Եղած մեկնարկային պայմանները խօսում են այն մասին, որ սցենարը կ'ընթանայ անցնուցում: Այդ անցնուցում անցման երաշխիքներն աւելի շատ ձեռք են բերուել դրսում, քան ներսում: ԵՄ հետ համաձայնագիրը քարտ բլանշ էր Սարգսեանի համար, յատկապէս Պուտինի կողմից, եւ Սարգսեանի համար այս համաձայնագրի ստորագրման ամենակարեւոր կողմը հենց սա էր. վերականգնել Պուտինի խաթարուած վստահութիւնն

իր հանդէպ: Սա նշանակում է ռուսական շրջանակներից իր իշխանութեանը եկող ուղղակի ու անուղղակի սպառնալիքների թոթափում կամ մեղմացում:

Անցնուցում անցումը, սակայն, որեւէ լաւ բան չի խոստանում հայաստանցիների համար, նոյնիսկ այդ անցման արդիւնքում իշխանութեան մնացող ՀՀԿ-ի, որովհետեւ փաստացի գործ ենք ունենալու հասարակութեան լիակատար ապաքաղաքականացման հետ, մանաւանդ կեղծ գործիքներով հանրային կարծիքի իմիտացիա ստեղծելու ֆոնին աճելու է ապատիան, իշխանութիւնը մենախօսելու է ինքն իր հետ, ինքը խօսելու է ինքն իր ստեղծած կեղծ քննադատութեան օջախներով, հակադարձելու է ինքն իրեն:

«ԼՐԱԳԻՐ»

### ՑԱՄԱԿՑԱԿԱՆ

ՏՕՔԹ. ՍԱՐԳԻՍ ԳԱՐԱՅԵԱՆԻ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց վշտակցուիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին փրոֆ. Գոկտ. Սիլվա Գարայեանին եւ համայն Գարակէօզեան, Պապայեան, Գարայեան ընտանիքներուն ու հարազատներուն:

### ՆՈՒՐԱՏԻՈՒԹԻՒՆ

Հանգուցեալ ՏՕՔԹ. ՍԱՐԳԻՍ ԳԱՐԱՅԵԱՆԻ մահուան տխուր առիթով փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները եղած են «Մասիս» շաբաթաթերթին.

- Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Հայկուհի Վահագն \$100
- Տիկ. Անահիտ Գարակէօզեան \$100
- Տէր եւ Տիկ. Գաբրիէլ եւ Մարիա Մոլոյեան \$100

### ՁԵՅՈՒՆԸ, ԱՅՆԹԱՊԸ, ՈՒՐՖԱՆ

Շարունակում է 13-էճ

Ուրֆացի քաջեր, ներառեալ յիշեալ քաջարի կիները, շարունակեցին իրենց դիմադրութիւնը մինչեւ Հոկտեմբեր 23, 1915, երբ քաղաքը թուրքերուն ձեռքը ինկաւ 25 օր տեւող հերոսամարտէ ետք: Հերոսական մահուամբ ինկան Եօթնեղբայրեան Մկրտիչն ու Ռասիկէլէնեան Յարութիւնը իրենց ընկերներով, սպանելէ ետք 2000-է աւելի թուրք զինուորներ: Զինադադարէն ետք 1000-ի չափ հայ որբեր հաւաքուած էին Ուրֆա, ուր որոշ թիւով հայեր վերադարձեր էին իրենց աւերակ թաղերը վերականգնելու համար:

Հայոց Ս Աստուածածին եկեղեցին կիսակործան մնացած էր եւ կարողացան գալն վերականգնել երբ 1919-ին անգլիացիք դէպի Թուրքիա յառաջացան: Հայեր քաջալերուեցան եւ Հալէպ գաղթողները Ուրֆա վերադարձան: Սակայն անգլիական քաղաքականութիւնը

հոն եւս խաբուսիկ եղաւ, երբ լքեցին քաղաքը եւ խուճապի մատնեցին անպաշտպան հայերը, թէեւ անոնց փոխարէն ֆրանսացիներ փոքրաթիւ բանակով եկան Ուրֆան պաշտպանելու:

Մինչ հայեր չուսալով որ լաւ օրեր կրնային յաջորդել ֆրանսացիներու պաշտպանութեան տակ, այս անգամ ամէն ինչ մթազնեցաւ քեմալական թուրքերու յառաջացումին հետեւանքով: Քեմալականներ պահանջեցին ֆրանսացիներուն անմիջական հեռացումը 1920 թուի փետրուար 9-ի հրացանածագութեամբ, ազդարարելով որ թողուն Ուրֆան, վտանգելով 6000-ի հասնող հայերու կեանքը: Ապրիլ 6-ին ֆրանսացիք իմացուցին հայերուն թէ պիտի հեռանային Ուրֆայէն: Հայեր ստիպուեցան մեղմ քաղաքականութիւն վարել թուրքերուն հետ, եւ սակայն ի վերջոյ 1921-1923 տարիներուն կարաւաններու շարքով անոնք գաղթեցին Հալէպ:

### ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՐԴԵՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

Շարունակում է 15-էճ

հասակին, տան շեմին առաջ կ'սպանուէր այս մտաւորականը, գրողը, ցարդ չբացայայտուած պատճառով:

Հայաստանի իշխանութիւնը 2000 թուականին Երեւանի 51-րդ դպրոցը կ'անուանակոչէ Վարդգէս Պետրոսեան վարժարան անունով: Կ'ըսեն թէ «Արեւը մաղով չեն կրնար ծածկել»: Վարդգէս Պետրոսեան 61 տարեկան հասակին արդէն արեւափայլ անձնաւորութիւն մըն էր, իր հեղինակաւոր ներկայութեամբ, ծանրակշիռ խօսքով, ջերմ եւ անսակարկ հայրենասիրութեամբ, արդէն վայելած էր եւ մինչեւ հիմա իր գործը կը վայելէ մեծ յարգանք եւ հետաքրքրութիւն:


Անոր բազմաթիւ եւ բազմա-

ժանր գրական վաստակը յաճախ բազմահարիւր հազարաւոր օրինակներով հրատարակուած են ողջ Սովետական Միութեան մէջ, որուն պատճառաւ էր որ արժանացաւ հայրենիքի եւ խորհրդային Միութեան բարձրագոյն շքանշաններու:

Այո, Վարդգէս Պետրոսեան իր մշտակենդան յիշատակով եւ մանաւանդ իր գրական եւ հասարակական վիթխարի վաստակով յաւերժ պիտի ապրի իր ժողովուրդի մտքին եւ յիշողութեան մէջ: Անոր 70, 75, 80 եւ 85 ամեայ տարեդարձներուն նման, իր ժողովուրդը պիտի շարունակէ յիշել եւ նշել անոր տարեդարձները, որովհետեւ Պետրոսեանները չեն սպանուիր, չեն մեռնիր, անոնք իրենց գործով եւ ապրած օրերով անմահ են, իրենց ժողովուրդին եւ իրենց պաշտելի հայրենիքին նման:

Եթէ կը փնտռէք եզակի գիրք մը ...  
 Անգուգական՝ գլուխգործոց, հազուագիտ, լուսանկարչական ալպոմ մը,  
 350 էջոց, 1000 գունաւոր լուսանկարներով եւ լաթակազմ ...

**ԱՐԵՒՍՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԵՐԷՔ ԶԵՐ ՏՈՒՆ**



**ԶԱՅՆԵՐ ԼՈՒՒԹԵԱՆ ՍԷՋ**  
 Հեղինակ՝ դոկտոր Գարայիս Տէր-Եղիայեան

Սուրբ Ծնունդի եւ Նոր Տարուայ լաւագոյն նուէրը:  
 Շրջագայեցէք գիրքի էջերով դէպի Ատանա, Ձէթուն, Մարաշ, Խարբերդ, Միս, Այնթէպ, Հաճըն, Տիգրանակերտ, Մուսա Լեռ... եւ այլն:

Անմիջապէս հեռաձայնեցէք եւ պատուիրեցէք Ձեր մեկ կամ մեկէ աւելի օրինակները - Հեռ: **(818) 246.2070**

# ՄԱՐԶԱԿԱՆ

## Յուրի Ջորկանֆ. «Եթէ ՊՍՉ-ն Յաղթահարի «Ռեալի» Արգելքը, Ապա Կարող է Ախոյեանների Գաւաթի Յոյս Փայլայել»

«Ռեալը» միակ թիմն էր, որ վիճակահանութեան ժամանակ չէի ցանկանում՝ բաժին հասնել ՊՍՉ-ին: Այդ մասին ասել է Ֆրանսայի հաւաքականի եւ փարիզեան ՊՍՉ-ի նախկին ֆուտպոլիստ Յուրի Ջորկանֆը՝ խօսելով Ախոյեանների լիգայի 1/8 եզրափակիչի վիճակահանութեան արդիւնքի մասին:

RESULTS OF THE DRAW			
JUVENTUS FOOTBALL CLUB (ITA)	vs	TOTTENHAM HOTSPUR FC (ENG)	
FC BASEL 1893 (SUI)	vs	MANCHESTER CITY FC (ENG)	
FC PORTO (POR)	vs	LIVERPOOL FC (ENG)	
SEVILLA FC (ESP)	vs	MANCHESTER UNITED FC (ENG)	
REAL MADRID CF (ESP)	vs	PARIS SAINT-GERMAIN (FRA)	
FC SHAKHTAR DONETSK (UKR)	vs	AS ROMA (ITA)	
CHELSEA FC (ENG)	vs	FC BARCELONA (ESP)	
FC BAYERN MÜNCHEN (GER)	vs	BESIKTAS JK (TUR)	

«Իր որակներով ՊՍՉ-ն գերազանցում է Ախոյեանների լիգայի 1/8 եզրափակիչ դուրս եկած միւս թիմերին: Բայց «Ռեալը» բարդ է: Արքայական ակումբը Ախոյեանների լիգայի նախորդ չորս մրցաշրջաններից երեքում նուաճել է գաւաթը:

ՊՍՉ-ի եւ «Ռեալի» դիմակայութեանը կը հետեւի ամբողջ աշխարհը: Եթէ փարիզեան թիմը կարողանայ յաղթահարել «Ռեալ» արգելքը, ապա կարող է Ախոյեանների լիգայի գաւաթը նուաճելու յոյսեր փայփայել: Դա նրանց վստահութիւն կը հաղորդի, եւ նրանք կը կարողանան գնալ մինչեւ վերջը»,- Ջորկանֆի խօսքը մէջբերում է Le Parisien-ը:

- Ախոյեանների լիգա, 1/8 եզրափակիչ
  - «Յուլենտուս» (Իտալիա) - «Տոտենհեմ» (Անգլիա)
  - «Բազել» (Շուէյցարիա) - «Մանչեսթեր Սիթի» (Անգլիա)
  - «Պորտու» (Պորտուգալիա) - «Լիվերպոլ» (Անգլիա)
  - «Սելտիա» (Սպանիա) - «Մանչեսթեր Յունայթեդ» (Անգլիա)
  - «Ռեալ» (Սպանիա) - ՊՍՉ (Ֆրանսա)
  - «Շախտիոր» (Ուկրաինա) - «Ռոմա» (Իտալիա)
  - «Չելսի» (Անգլիա) - «Բարսելոնա» (Սպանիա)
  - «Բաւարիա» (Գերմանիա) - «Բեշիկթաշ» (Թուրքիա)
- Առաջինը նշուած թիմերը առաջին խաղերը կ'անցկացնեն տանը:

## Դորտմունդի «Բորուսիայի» Կիսապաշտպանը՝ 2017թ. ԱՄՆ-ի Լաւագոյն Ֆուտպոլիստ

Դորտմունդի «Բորուսիայի» կիսապաշտպան Կրիստիան Պուլիշիչը ճանաչուել է 2017թ. ԱՄՆ-ի լաւագոյն ֆուտպոլիստ: Քուէարկութեանը մասնակցել են ԱՄՆ-ի ազգային հաւաքականի խաղացողները, հաւաքականների եւ MLS-ի, NASL-ի եւ USL-ի ակումբների մարզիչները, նաեւ նախկին ֆուտպոլիստներ:



19-ամյա Պուլիշիչը դարձել է այս մրցանակին արժանացած ամենաերիտասարդ ֆուտպոլիստը՝ բարելաւելով Լենդոն Դոնովանի ռեկորդը: 2003-ին Դոնովանն ԱՄՆ-ի լաւագոյն ֆուտպոլիստ էր ճանաչուել 21 տարեկանում:

Այս տարի Պուլիշիչը «Բորուսիայի» հետ դարձել է Գերմանիայի գաւաթակիր: ԱՄՆ-ի հաւաքականը 1986 թուականից հետո առաջին անգամ չի նուաճել աշխարհի առաջնութեան եզրափակիչ մրցաշարի ուղեգիր:

## Մրցավարները Դարձեալ Չեն Արձանագրում «Բարսելոնայի» Կոլը

«Բարսելոնայի» եւ «Դեպորտիւուսի» միջեւ սպանական Պրիմերայի 16-րդ տուրի խաղում մրցավարները սխալմամբ չեն արձանագրել կատալոնական ակումբի ուրուգուայցի յարձակուող Լուիս Սուարեսի գոլը: Սուարեսի՝ ռաբոնա ոճով հարուածից յետոյ գնդակը հատել է դարպասային գիծը, սակայն մրցավարները չեն նկատել դա:



Այդ խաղում «Բարսելոնան» տնային յաղթանակ էր տարել 4:0 հաշուով, իսկ Սուարեսը դարձել էր դուբլի հեղինակ:

Յիշեցնենք, որ Սպանիայի առաջնութիւնում չի կիրառուում կոլի արձանագրման աւտոմատ համակարգը:

«Բարսելոնան» նմանատիպ իրավիճակում յայտնուել էր նաեւ «Վալենսիայի» դեմ Սպանիայի առաջնութեան 13-րդ տուրի խաղում (1:1):

## Յենրիխ Մխիթարեանը՝ Ժող Մոուրիցիոյի Գերի

Bein Sports-ը ծաղրանկարով անդրադարձել է անգլիական «Մանչեսթեր Յունայթեդում» պորտուգալացի գլխաւոր մարզիչ Ժող Մոուրիցիոյի հետ անձնական խնդիրների պատճառով յայտացուցակից դուրս մնացած Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Յենրիխ Մխիթարեանի վիճակին՝ յիշեցնելով, որ նախկինում Մոուրիցիոյի հետ խնդիրներ են ունեցել բազմաթիւ այլ աստղեր, որոնք եւս չեն ընդգրկուել նրա ղեկավարած թիմերի կազմում:



Յիշեցնենք, որ ESPN-ի տուեալներով, Մոուրիցիոն ու Մխիթարեանը վիճաբանութիւն են ունեցել, որից յետոյ Հայ ֆուտպոլիստը դուրս է մնացել անգլիական թիմի յայտացուցակից:

Սպասուում է, որ Յունուարին Մխիթարեանը կը փոխի ակումբը:

## Դաւիթ Արշակեան. «Շիկագո Ֆայրուս» Ունեցայ Գերազանց Փորձառութիւն

Ֆուտպոլի Հայաստանի հաւաքականի թեկնածու խաղացող Դաւիթ Արշակեանը յայտարարել է ամերիկեան ՄԼՍ-ի «Շիկագո Ֆայր» ակումբից հեռանալու մասին:



«Կը ցանկանայի յայտարարել, որ այլեւս «Շիկագո Ֆայր» ֆուտպոլիստի ակումբի խաղացող չեմ: Ունեցայ գերազանց փորձառութիւն, սակայն որոշակի հանգամանքներ չդաստիարակեցին: Ես իմ կարիերայի ձաջորդ մարտահրաւէրի սպասումով եմ: Շնորհակալութիւն եմ յայտնում ակումբին, երկրպագուներին, աշխատակիցներին եւ խաղացողներին, որոնց հետ անցկացրի 1.5 տարի»,- գրել է Արշակեանը ինստագրամում:

2016 թուականին Լիտուայի «Տրակայից» «Շիկագո Ֆայր» տեղափոխուած Արշակեանն ամերիկեան ակումբում անցկացրել է 17 խաղ:

## Աշխարհի Գաւաթ. Եանա Եգորեանը Նուաճել է Պրոնգէ Մետալ

Ռիո-2016-ի կրկնակի օլիմպիական ախոյեան Եանա Եգորեանը պրոնգէ մետալ է նուաճել Մեքսիկայի կանկուն ծովափնեայ քաղաքում անցկացուած սուսերամարտի աշխարհի գաւաթի խաղարկութեան հերթական փուլում:



Թրամարտի անհատական պայքարում Ռուսաստանի դրոշի ներքո հանդէս եկող Հայ մարզուհին պարտուել է միայն կիսազրափակիչում, որտեղ նրա ճանապարհին կանգնել է ուկրաինացի Օլգա Խարլենը: Եգորեանը խաղի յաղթել է նաեւ իտալուհի Արիանա Էրիգոյին: Երկրորդ պրոնգէ մետալը բաժին է ֆրանսացի Սեւիլիա Բերդերին:

Յիշեցնենք, որ Ռիո-2016-ի կիսազրափակիչում Օլգա Խարլենին յաղթել էր հենց Եանա Եգորեանը, որը նուաճել էր նաեւ չեմպիոնի տիտղոսը: Նախորդ ամիս Եգորեանը պրոնգէ մետալակիր էր դարձել նաեւ Բեյլիայի Սինտ-Նիկոլաս քաղաքում անցկացուած աշխարհի գաւաթի խաղարկութեան հերթական փուլում:

# SEROP'S CAFE

## GREEK & LEBANESE FOOD

SERVING BATON ROUGE SINCE 1979